



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Կ.ԱՌՐԹԿԻՊԱՆԻՋԵ



ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ. ՊԵՏՅՐԱՏ

Խ. Զահրադ



# ԱՌԱՋԻՆ ՄԱՅՐԸ

Թարգմ. ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆ

16363  
A I 8236



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930



Գրառեպլար № 2982 (բ)

Պատվեր № 239    Հրատ. № 1211    Տիրաժ 2500

---

Պետհրատի լեռկրորդ տպարան Յերկանում.

## ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1928 թվի սեպտեմբերի 17-ի լերեկոյան, մի ան-  
ծանոթ մարդ զգուշութեամբ բաղխեց սենյակիս  
դուռը:

— Ներս մտեք, բացականչեցի յես:

Դուռը բացվեց. սկզբում լերեաց խիտ ու զան-  
դուր մազերով ծածկված մի գլուխ. աչքերի հարցա-  
կան հայացքը նորից կրկնեց—կարելի՞ չի մտնել,  
ապա լերեաց անծանոթի մարմինը: Իմ առաջ կանգ-  
նած եր կաշվե պիջակով մի լերիտասարդ, թիվի տակ  
թղթերի մի կապոց, անմիջապես ճանաչեցի թի ով եր  
հյուսիս:

— Մեկն աչն սովորական լերիտասարդներից,  
վորոնք խմբագիրներից ավելի հաճախ են լինում  
խմբագրատներում և կաշվե թղթապանակների մեջ  
իրենց հետ ման են ածում խնամքով պահած ձեռագրե-  
րը, — մտածեցի չես և ձեռքս մեկնեցի: Բարեւոյցի ք  
իրար ու ծանոթացանք: Բանֆակցի լեր:

Մի ժամանակ, բավական անհարմար ձևով  
նստած եր դիմացս, մատներով խաղում եր, կաշվե պի-  
ջակից թուլլ կերպով, լերկու-յիւրեք թիլից կախված՝  
կոճակի հետ. կոճակը կտրվեց և աղմուկով գլորվեց  
հատակի վրա. բանֆակցին ալդ ժամանակ միայն  
սիրտ առավ և սկսեց խոսել.—

— Դրում եմ մի փոքրիկ պատմվածք. նյութը

վերցրել եմ իմ մոտիկ ընկերներին կյանքից. մինչև ավարտելս՝ ուզում եմ կարգալ ձեզ մոտ, ձեր կարծիքն իմանալ, լսել ձեր դիտողությունները... Մի խոսքով՝ կանգ առավ, ձեռագիր տետրակը բացեց՝ արժե՞ արդյոք, վոր նյութս շարունակեմ, արդյոք գրելու շնորք ունե՞մ, թե՞ վոչ։

Խնդրեցի ձեռագիրը թողնել ինձ մոտ։ Միքանի ամիսներ են անցել այդ որովանից. ամեն որ համարյա սպասում էյի բանֆակցուն, բայց նա չերեկաց։ Հեռախոսով հարցրի բանֆակ, ինձ պատասխանեցին, վոր նրան ուղարկել են Մոսկվա՝ ուսանելու։ Վորոշեցի առանց վորևե փոփոխության տպագրել այդ պատմվածքը, սակայն պատմվածքի վերնագիրը՝ «Գայանելի առաջին քալը»-ի փոխարեն անվանեցի՝ «Առաջին մայրը»։ Իմ կարծիքով պատմվածքի բովանդակությանն ավելի հարմարվում եր իմ վերնագրած անունը։

Հատակի վրա անշարժ ընկած ստվերը ցնցվեց-  
 դողդողաց. նրա դժերի սիմետրիան— համաչափությունը  
 խանգարվեց և նմանվեց մանկական անվարժ ձեռքով  
 ձեկած մի քաղաղի:

Այդ քաղաղանման ստվերը կամաց-կամաց ստա-  
 նում և հատակի դույն (սենյակի հատակը փայտից եր,  
 վորի տախտակները դեռևս չեն երկած, բայց դեղնավուն՝  
 բաց դուլն ունեւին): Ստվերը ծավալվեց -- յերկարա-  
 ցավ, տատկանաբար լետ քաշվեց՝ հենվեց անկյուննե-  
 րին, սակաւն հենց այդ ժամին, կարծես մեկը հանկարծ  
 վոտքով դարկեց գետնին— հատակին, ստվերը կիսվեց:  
 Կեսը՝ նույն տեղում հանգավ— անհետացավ, իսկ մյուս  
 կեսը, սահեց արագ և կատվի նման ցատկեց-կալավ սե-  
 դանի ճախարակած (խառատած) վոտնեւրին և հանգավ  
 այնտեղ:

Լուսացավ:

Թոթիաւուրին արթնացավ. բացեց իր աչքերը,  
 շրջապատում գտնված բոլոր իրերը նրա աչքին լերե-  
 վում եր վարպետ տարածութւնից դուրս գտնված՝ մը-  
 շուշապատ մի ամբողջական զանգված. ժամանակն իր  
 գիտակցութւնն եր կորցրել, դրութւնն իր տեղը:  
 Ձեր գիտակցում, թե ինչ է կատարվել իր շուրջը, ուս-  
 տի և նորից քաղցր նինջը հաղթեց նրա աչքերին, ու-  
 ղեց քնել, չկարողացավ. կողքը շրջեց, ապա ուղղվեց

մեջքի վրա և յերբ իր ծոծրակը թաղեց տաք բարձի մեջ, նրա ամբողջ մարմնովը մի դուրեկան դող անցավ: Բացեց իր մետաղագուլն ու ջլոտ բագուկները և նոր միայն զգաց, վոր շատ անուշ ու խորը քնած է յեղել:

Լուսամուտից գաղտուկ ներս թափանցող արշալույսը սառնորակ աղբրաջրի նման սփռվեց նրա աչքերին—թարմություն զգաց: Թոթիաուրին գիտակցում է արդեն, վոր այլևս լիակատար կերպով չի կարող քնել, չեթե վորևէ շորով չծածկի լուսամուտը. սակայն սովորական ծուլությունը թույլ չի տալիս նրան տեղից վեր կենալ — գերադասում է մնալ պառկած:

Առաջվանից ավելի պինդ փակեց իր աչքերը, վորպեսզի մոռացության տա լույսի գիտակցությունը և կարողանա քնել:

Սակայն աչքերի վրա ուժի գործադրումն ել ավելի նպաստեցին նրա կատարյալ արթնանալուն: Անկախ Թոթիաուրու ցանկությունից աչքերն իրենք իրենց բացվում, չեյին հնազանդվում նրան՝ քնել չեր կտրողանում:

— Պետք է լուսամուտը վարագուրել, — վորոշեց Թոթիաուրին և տեղից ցատկեց:

\*  
\* \*

— Ինչպէս լուսացել է արդեն, — ասաց ինքն իրեն Թոթիաուրին, վեր կացավ, ճակոտաց, ծափ տըվեց, արագ հագավ շապիկը և դուրս չեկավ բակը:

Ագահաբար շնչեց հոջոր ամառանոցի կողմից չեկող թարմ ու զովարար ոդը և թռավ կախվեց մարմ-



նամարդական լերկաթե ողակներից—աշխուժացան, կենդանությունն ստացան զիշերային անշարժության հետեանքով նրա մարմնի թմրած հոգերը, մկանունքները դարձան ավելի առաձգական, այնպես վոր, լերը մի քանի վարկյան մարմնամարդական վարժություններից ողակները թողեց ու ցած թռավ, այնպես թարմ ու զվարթ զգաց, վոր ժպտաց—ուրախացավ և ցանկություն զգաց մի մեծ գործ, միտովուն աշխատանք կատարելու։ Այդ վարկյանին նրան թվում էր թե ամեն տեսակ արգելքներ ու խոչընդոտներ խորտակվելու յեն նրա առաջ և աջն գործը, վոր մինչ այդ նրան թվում էր անիրագործելի և անհաղթահարելի, այժմ նա կարող է իրագործել, հաղթահարել ըստ դժվարությունների։

Բարձրացրեց իր գլուխը, նայեց շուրջը և նկատելով բակի մի կողմում արդեն կոկոնած ու սպիտակ ու սիրուն ծաղիկներով զարդարված շրերնուն՝ ուրախ բացականչեց. —

— Գարունը մոտենում է։

Նոր ուռկանն ընկած ձկան նման՝ ցուրտ ու խոնավուն առավոտն և տերևակալած ծառերը կենդանություն ու շունչ տվին թոթիատուրու աչքերին։ Արագ, հինգ վոստյունով բարձրացավ քառասուն աստիճանանոց սանդուղքը և մոտեցավ կանգնեց ջրհոս խողովակի առաջ, վորտեղից ծորում էր ջուրը։

— Վարդանուշ, չե՞ս մըսում, — պատշգամբից հարցրեց կլոր կաղմված ունեցող հարևան հայ կնոջը, վորը լվացք էր անում բակում։

— Ի՞նչ մըսելու ժամանակ է, սիրելիս. մեր դռնապանը, յերեկ գիշեր մինչև իսկ առանց քուրքի չի



անցկացրել, — անմիջապես վրա բերեց լվացարար կինը՝ սիրալիւր հալացք ձգելով Թոթիաուրու վառվորուն ու կենդանի աչքերին. նա յեւ տաշտը վերցրեց և մոտեցավ ջրհոս խողովակին:

— Այսպես վաղ ինչո՞ւ չես վերկացել:

— Գնում եմ գործարան, — Թոթիաուրին չետ քաշվեց՝ տեղ տալով լվացարար կնոջը:

— Լվացվիր Թոթի ջան, լվացվիր, չես կսպասեմ, — ասաց կինը և ձեռքով Թոթվեց նրա մեջքը. — միթե կիրակի որն ե՞լ ես աշխատում:

— Այո, այսօր մեր գործարանում շաքաթորդակ ե:

— Ճշմարիտ, այնպիսի տոնով արտասանեց կինը, վոր կարծես թե լիովին հասկանալիս լիներ շաքաթորդակի նշանակութունը,

— Յերբ աշխատանքից վերադառնալու լինես, անցիր մեզ մոտ, մեզ մի մոռանա. ապա շրթունքները նրա ականջին մոտեցնելով՝ ցածր ձայնով փսփսաց, — քեզ հետ անհրաժեշտ գործ ունեմ, Թոթի ջան...

Թոթիաուրին սրբելով չորացրեց իր թաց մարմինը. ձեռքի դաստակով մի քանի անգամ զարկեց շատ տրորելուց ու շփելուց իր կարմրած դոշին ու մեջքին, և գոհ իր առողջութունից՝ ժպտաց յերեսսրբիչը ձգեց ուսիւրին և թռչկոտելով վազեց սենյակը:

\*  
\* \*

Արագ ու համաչափ, կարծես զինվորական յերաժըշտախմբի նվագի տեմպի տակ՝ գնում-քալում եր Թոթիաուրին: Բարձր կրնկանի կոշիկների տկուկոցին ներդաշնակում եր դատարկ փողոցների արձագանքը. տիրող խաղաղությամբ լիացած եր Թոթիաուրին:

— Վորքան դեղեցիկ ե ամեն ինչ, ի՞նչ սքանչելի տաժա՛ռտ — քացակա՛նչեց Թոթիաուրին, յերբ մտավ պալատի առաջ ձգվող մշուշ սպա՛ռտ ծառուղին։

— Այս գեղեցիկ ծառուղիով անցնում եմ ամեն տաժա՛ռտ, սակայն չիրքեք ուշք չեմ դարձրիլ ու նըշմարել իրարից այսքան համաճափ դասավորված ծառա՛քքերը, վորոնք տերեւակալս ծ ժամանակ գեղեցիկ տեսք են տալիս ծառուղուն, չերբ տերեւներն ամբողջովին ծածկում են գետինը։ Թոթիաուրին կանգ առավ, նայեց վեր՝ ծառերի կառարներին։

Արշալույսը տաքացավ։ Արեւի պսպղուն ճառագալթները ժպտացին պալատի պատերին ու կտրին, փայլփրկիլ սկսեցին պատուհանների ապակիները։ Թոթիաուրու լսելիքն ամբողջովին զրավված էր գործարանի սուլիչի ձայնով։ Մի վարկչան կանգ առավ զարմացած՝ (չերկու տարի չե արդեն, վոր այդ գործարանը կիրաւի որերը յերբեք չեր սուլիլ), քանի վոր անսովոր երայդ կանչը հատկապէս կիրակի որը։ Բայց հանկարծ՝ սթափվեց ու ժպտաց։

— Շարաթորյակ ե, ինչպես յերեւում ե մեր տըղերքն ամեն ինչ կարդ ու սարքի տակ են գցել, նույն իսկ չեն մոռացել նաե սուլիչի ազդանշանը։

Ուրախության ու վոգեորության անասելի բոցավառ ուլիք անցավ նրա ամբողջ մարմնի միջով։ Ինչո՛ւ, մի՞թե առաջին անգամ եր լսում սուլիչի ձայնը. մի՞թե այժմ ե միայն հասկանում այդ ազդանշանի բովանդակութիւնը։

Յերեկ, յերբ վերջին անգամ պտտվեց ու կանգ առավ մեքենան, վոր մինչ չերկուշաբթի անաշխատ ու հանգիստ մնար չուղած վիճակում, Թոթիաուրին հեկո՛ված էր դռան պատին։

Ընկերներին, վորոնք հանում ելին իրենց մրտաժ բանվորական շորերը և պատրաստվում ելին ձեռքերն ու յերեսներն լվանալու՝ կանչեց.--

— Ընկերներ, ֆնացեք այստեղ, թուղցիկ միտինգ պիտի կազմակերպենք:

— Ի՞նչ բանի յես, ագիտարոպ, լեզուդ քոյր ե գալիս, ի՞նչ ե. — Դժգոհելով պատասխանեց զմեռորեցի Արթանը և մի փթանոց յերկաթը խաղացրեց ողի մեջ:

— Առավոտից մինչ ժամի չորսն աշխատանքի մեջ ենք, իսկ ժամի չորսից մինչև յերեկո—հայ բջիջի ժողով, հայ արտադրական խորհրդակցություն, տեղկոմական նիստ, զանազան հանձնաժողովներ յնիստեր, հո անտեր չե՞նք: Յիթե վոչնչին ոգնության չհասնեմ, գոնե ոջախիս հետ կտեսնվեմ. հո ամբողջ որս ժողովներում չպիտք ե անցկացնեմ:

Դիմեց հասակավոր բանվորներից մեկն իր կողքին կանգնած յերիտասարդին. սակայն յերր տեսավ, վոր յերիտասարդն ել ե ձեռքերը շարժում և չի ուզում, վոր միտինգը կազմակերպի, մտածեց ինքն իրեն.—

— Այս մարդն, ել ի՞նչ կարիք ունի իմ համոզիչ խոսքերի,—ասաց ու աչք ածեց սեղանի շուրջը խմբված բանվորներին, կարծես վորոնում եր, վոր իմանա թե՛ ով ե այդ բանվորներից միտինգի կողմնակից: Նա նշմարեց Մարոյին, վորը հրացանաձիգ գնդի ղեկավար՝ Գիդոն Ալանիային խնդրում եր՝ ոգնել իրեն սեղանը բարձրանալու: Մոտեցավ Մարոյին և իր տեսակետը հարցրեց նրան. ապա հանգիստ յետ արեց իր կոշիկների քերվածքից կեղտոտած գոգնոցը, գլխարկը ծածկեց և պարտականությունը կատարած մարդու բաժականությամբ՝ դուրս յեկավ բակը:

Գիւղոնը ձեռքերով բռնում և նրա մեջքը, մի վտա-  
քը դնել և տալիս սեղանի վրա և յերբ Մարոն հար-  
մարեցնում և մշուս վոտքով ել սեղանին թռնելու,  
ձեռները բաց և թողնում հանկարծ. Մարոն չի կարո-  
ղանում հավաստրակշռութունը պահել և նորից թըռ-  
չում և հատակին:

— Ի՞նչ ես չարչարում ինձ բարկանում ե Մա-  
րոն:

— Այ մարդ, գոնե ճաշենք,— կանչեց մեկն ան-  
համարձակ ձայնով: կարծես ինքն ել չեր հավատում,  
վոր ճաշը համենապէս զեպս հիմնավոր պատճառ չեր  
կարող լինել միտինդի հետաձգման:

— Սոված ենք, սոված,— գոռաց Գիւղոնին:

Մինչև այժմ Մարոյով եր զբաղված նա, բայց  
յերբ Մարոն վերջապես սեղանը բարձրացաւ, պարապ  
մնալ այլևս չկարողացաւ, համբերութունը կտրվեց.  
ընկերներին դադտուկ մոտենում եր լետեից և բարակ  
վոլորած թղթով խողտացնում նրանց սկանջները:  
«Ճաշի բացականչութունը չեր լսվեց՝ նոր գործ բաց-  
վեց նրա համար և սկսեց գոռալ:

— Ընկերներ...

Մարոն վոտքով խփում եր սեղանին, այտերը  
կարմրել էին, իսկ գլխակապ շորն ընկել եր աչքերին:

— Ընկերներ,— գլխակապը շտկեց և փորձեց բար-  
ձրը ձայնով կանչել:

— Ընկեր քարտուղար, խնդրեմ լռեցրու ժողո-  
վրդին,— ձեռքով հրեց ճաղատագլուխ Բեքաուրուն,  
վոր հանգիստ հենված եր սեղանին և զեկավարում եր  
70 հոգուց բաղկացած ժողովը:

Բջիջի անդամներին ուսումնասիրել եր մեքենայի  
մասերի նման:



Առավոտները, իբրբ լուղում եր մեքենան և բաց եր թողնում ել հոսանքը, թուլացած անիվները սթափվում եյին ու հանկարծակի գալիս անսպասելի պատահարից: Սկզբում ոտարոտի յեր թվում նրանց ել հոսանքը, ծանրությամբ և կարծես դժկամակությամբ սկսում եյին խռիւռացնել ու աղմկել, իրբեմն ել բոլորովին ձայնն ընդհատվում, դանդաղում եր անիվների պտույտը:

Բեքաուերին պատրաստ կանգնած եր մեքենայի մոտ. նա լավ դիտեր, վոր մի քանի վարկյան հետո մեքենայի խռիւռոցը կանոնավոր և ներդաշնակ—համաչափ տկտկոցի յեր փոխվելու: Կաշվե պարանները, վորոնք այժմ դանդաղորեն քսվում եյին անիվների յեզրերին, շփշփալու լեն վորպես տերևակալած ծառերը քամոտ յեղանակներին և արագացնելու լեն անիվների պտույտը:

Բջիջը նույն մեքենան ե. սկզբում ոտարոտի լե թվում ամեն մի նորութլուն, տղաներն սկսում են անկանոն կերպով աղմկել, շատերը նույնիսկ սկսում են ձանձրանալ, բայց շատ շուտով, կարճ ժամանակից հետո հանդարտվում են և բոլորը, մեքենայի մասերի նման, դունդունալով ներդաշնակում են իրար: Բեքաուերին չի վրդովվում սրա կամ նրա անտեղի բացական չուրթյուններից ու նկատողութլուններից:

— Նոր ե, դեռես անփորձ, — մտածեց Բեքաուերին իբրբ նայեց Մարոյի բոցավառված դեմքին. — նրան թըվում ե, թե մի վարկյանում հնարավորութլուն չունեցավ բոլոր իր ասելիքներն ասելու, բանվորները կարող են ցրվել և միտինգը կվերջանա. իզուր առաջջամ չում չարինք նրա վերաբերմամբ, լավ «աղտիվիստկա»



կլինի. սակայն նա, վոր պահանջում ե ինձնից ժողովել լոկացնել, լավ չէ. կատարյալ լռութիւն վնչ միայն լիս, ալլև շրջկոմի ներկայացուցիչն անգամ անկարող ե իրադործել, քանի դեռ չի սկսել իր խոսքը:

Խոսիք ե կտեսնես, վոր բանվորներն իրենք իրենց կլոնն. խոսիր այնպիսի խնդիրների մասին, վոր նրանց դուր գա ե հետաքրքրվեն. իսկ զրանից հետո վնչ միայն քեզ կլսեն, ալլև ճանճի բզդոցն անգամ անլսելի կդարձնեն:

Մի վարկչան աղմուկը թուլացավ, Մարոն ողորդեց հանգամանքից ե սկսեց խոսել աւնպես, կարծես թե շարունակելիս լինիր մինչև այժմ խոսածը:

— Այդ պատճառով, ընկերներ, մենք պետք նյութ տայինք մնացած բջիջներին, ամենից առաջ պետք ե շարաթորակներ անցկացնենք աշխատանքի դպրոցներում...

Կամաց-կամաց, լռութիւնը վերականգնվում եր ե բոլորը լսում ելին ուշադրությամբ:

— Չէ՞ վոր ասում եյի, թող սկսի իր խոսքը. իսկույն լռութիւն կտիրի ժողովում— ժպտաց Բեքաուրին:— Յերկար չդիտք ե խոսել, թող ուրիշներն ել հըրապարակ գտն ե արտահայտեն իրենց տեսակետները, փոխաց Թոթիաուրու ականջին ե շտապեց ձեռքերը լվանալ:

— Եսպիս ել բան կլինի. մեր ազատ կիրակի որը նվիրենք շարաթորակին, յիթե անգպես անհրաժեշտ եր, այն ժամանակ բարի լինելիք առավոտվանից կարգադրելիք, վոր ազատ լինելինք աշխատանքից.— ողորդեց Արթննան Մարոյի բոպկական դադարից ե բացականչեց:

— Մի ընդհատեք, — նկատեց ճաղատ-վուխ բանվորը:

— Նախագահ, ձայն եմ խնդրում:

Կանչեց Գիդոնը, յերբ Մարոն սեղանից իջավ և նստեց իր տեղը: Բեքաուերին ժպտաց:

— Մի փոքր առաջ մի վարկչան անգամ չեր ուղում սպասել, իսկ հիմա նախագահ ել ե գտել:

Մարոյի կողքին տեղավորվեց. յերբ յերկուսն ել նստան, մոտիկ շարվածներն ել նստոտեցին. մնացածները յետևեցին նրանց: Վոտքի վրա մնացին Գիդոնին և Արթանը:

Արթանան կանգնած եր դռան մոտ, նա իր արևից ալրված թուխ դեմքի վրա յերևացող միջուկի մազերը ջղալնորեն ձգձգում եր և անհանգիստ շարժումներով՝ նայում դեպի փողոց:

— Ի՞նչ ես ուզում, դիմեց Թոթիաուերին Գիդոնին, վորը ձեռքերն այնպես եր շարժում ուղի մեջ, կարծես վառած փայտ լիներ ձեռքին:

— Առաջարկություն ունեմ:

— Առաջարկիր, — լռություն ընկերներ:

— Շաբաթորակի խնդիրը հարկավոր ե փոխադրել բջիջի նիստը, քննության առնենք աջնտեղ և ապա...

— Սկսեց իր սովորական առաջարկությունները: Բարկացած կանչեց Բեքաուերին:

Գիդոնին հայտնի չե առհասարակ իր առաջարկություններով. յերկար ժողովի նստել նա չի կարող ձանձրանում ե. շատ մեծ դժվարությամբ ու ձանձրութով լսում ե զեկուցումներն ու դասախոսությունները և չեթե զեկուցման շուրջն անհրաժեշտ ե գործնական դիտողություններ և բանաձևեր հանել, իսկույն վեր ե թռչում և սկսում իր առաջարկությունները՝ — հանձնենք բյուրոյին կամ ընտրենք մի հատուկ հանձնախումբ:

Այժմ, յերբ գոռալով վոչինչ չկարողացավ անել, ձե-  
վական կողմը պաշտպանած լինելու համար, առաջարկ  
մտյրեց, վոր միտինգը չետաձգվի:

— Բոլոր խնդիրները պետք է կանխորեն քննու-  
թյան առնվին քշիջի ժողովում. ալսպես չի կարելի,  
յերբ քեֆներդ ուզում ե, կազմակերպում եք ժողով-  
ներ և մեզել զործից գցում:

— Ճիշտ ե, ճիշտ ե, պետք է քշիջում քննենք  
հարցը, — արձագանքեց Արթանան և դռան մոտից հե-  
ռացավ, մտածեց — հավանորեն Գիդոնի առաջարկը  
կանցնի, միտինգը կհետաձգվի, ուրեմն և կարիք չի  
զղացվի ժողովից պաղտուկ փախչելու.

— Ինչն է ճիշտը, — բարկացած պատասխանեց  
Թոթխաուերին.

— Բշիջի նիստը նշանակված է առաջիկա չերեք-  
շարթի ուրը, վաղվա կիրակին վոր պարապ անցկա-  
ցենք, ել վորտեղից կարող ենք շաբաթօրյակ գլուխ  
բերել, վճրահղ ե գլուխդ:

— Գլխարկի տակը, նկատեց ժողովականներից  
մեկը, Արթանան գլխարկը դրել եր թևի տակ:

— Դրա գլուխը իր տեղումը չի, — ծաղրանքով  
կահչեցին ուրիշները, Բարձրացավ ընդհանուր ծիծաղ,  
Արթանան կարմրեց:

— Յես իմն ասեցի ու վերջացրի, այլևս իզուր  
տեղը ձեռքերս չեմ շարժի: Իսկ դու, ծղենթեցի բարե-  
կամ, աշխատիր եդ մեծ գանգդ, ճիշտ վոր իր տեղում  
մնա:

— Քանի վոր ալսքան սպասել ենք, հավաքվել,  
մի փոքր ել սպասենք ու վերջացնենք, ել ինչ նոր  
ժողով ու նոր քննություն:

Խառնվեց խոսակցության մեջ խռպոտ ձայնով Խուխունին: Ամեն անգամ, ժողովներում հենց վոր լռութունն է ընկնում Խուխունին սովորաբար սկսում է ննջել: Աղմուկի և կամ տաք վիճաբանության ժամանակ հանկարծ զարթնում է և անխուսափելիորեն խառնվում է խոսակցությանը կամ հանգստացնելու կամ հաշտեցնելու մտքով: Ապա նորից սկսում է ննջել չեթե իհարկե ժողովականներից մեկն ու մեկը չխանգարի նրան:

Մարոյի առաջ թղթեր չերևացին: Թղթի վրա մի անվարժ ու անգրագետ ձեռք, անճոռնի ու անկանոն տառերով սկսեց գրել: Մինչև ստորագրության ավարտումը, մեքենայական բաժնից նախագահ ընտրված բանվորը, չերկու յերեք անգամ պինդ հազալուց հետո խուլ ձայնով, կարծես կոկորդից ձայն հանելը դժվարանալիս լիներ, բացականչեց:

— Որակարգի խնդիրներն,— շարաթորյակի հարցը և ընթացիկ խնդիրներ, ամենից առաջ զբաղվինք շարաթորյակի խնդրով...

Կանգ առավ: Բեխաուրին, վորը մշտական, անբաժան ուղեկիցն է անփորձ նախագահների, ականջին փսփոաց:

— Միության նշանակության մասին:

— Միության նշանակության մասին, անմիջապես հայտարարեց նախագահը ժողովականներին. խոսքը տրվում է,— շուռ չեկավ, աչքերով վորոնեց թոթիաւորուն և վերջացրեց,— Թոթիաւորուն և այլն:

— Ի՞նչ, ի՞նչի մասին:

Նախագահը զանգահարեց:

— Թույլ տվեք խոսել, մի խանգարեք հեռուորին



և այլն... Այլևս բանը չյերկարացրեց, բարձրացավ—  
ուղղվեց աթոռի վրա, զանգը վերցրեց ձեռքը, լեզվակը  
մատնեղով բռնեց — վորպեսզի հանկարծակի չզանգա-  
հարվի և սկսեց նաչիլ ու զիտել ժողովականներին:

Յնվ ալսոր, շաբաթորակին վնացող Թոթիաուերին  
սուլիչի ձախի մեջ, յերբեք այնքան հարազատ ու  
մտերիմ բան չի զգացել, վորքան ալժմ: Բջիջի, գլխա-  
վորապես նրա նախաձեռնութեամբ, կիրակի որը սու-  
լեց սուլիչը, վորպեսզի հարյուր քառասուն աշխատող  
ձեռքեր (զույց միքիչ պակաս, հիշեց հանկարծ Գիդոնի և  
Արթանի վարմունքը միտինգում), կիրակի որը լծվեն սո-  
վորական լեռանդուն աշխատանքի և մի նոր քար նորից  
ափեւացնենք մեր յերկրի շինարարական հիմքի վրա:

— Դեռ վորքան պարտականություններ, վոր-  
քան աշխատանքներ ունենք կատարելու ամեն մեկս,  
վոր մեր յերկիրը կանգնեցնենք սոցիալիզմի ուղիի  
վրա: Պետք է մոռացութեան տանք, վոր մենք վարձու  
բանվորներ ենք (այստեղ նորից հիշեց Արթանին),  
վորոնք սովորական 8 ժամյա աշխատանքից հետո  
ալլևս վոչ մի զգացում չեն տաժում դեպի մեր ձեռ-  
նարկած աշխատանքները:

Վոչ, ընկերներ, այս աշխատանքը, վորի մեջ  
տնքում, քրտինք ենք թափում, աչն ձեռնարկությունը,  
ուր մենք ծառայում ենք, մերն է, մեր սեփականը:

— Պնդելով—համառորեն կրկնում եր իր խոս-  
քերը, կարծես մեկը հակառակը համոզելիս լիներ  
նրան.

— Մոր նման, հարազատ մոր նման, խնամք  
պիտի ունենանք դեպի մեր աշխատանքը՝ դեպի մեր  
ձեռնարկությունը:



Թոթիաուրին ժպտաց։ Յերկու ամիս առաջ, առավոտյան, գործարան գնալու պատրաստութիւն տեսած մեկի դռանը ցցվեց հանկարծ հայրենի լեռներից յեկած մայրը։ Բերել եր իր հետ պանրի չոր կտորներ, նախշուն գուլպաներ, սիրասուն մոր կնճռոտած դեմքը, խոտերի ու դարմանի,—գլուղի հոտը։ Յերկու տարվա ջերմորեն կարոտացած հոգիները պինդ գրկախառնվեցին իրար։ Ապա մայրը յետ քաշվեց, նայեց իր վորդուն վոտքից մինչև գլուխ, և լերք իր աչքերը վորդու աչքերին առան, յերկունս ել ժպտացին—մայրը շրարձր ձայնով—ծափ տալով, իսկ վորդին հանգիստ, կարծես ամաչկոտ։ Թոթիաուրու դեմքը թաղվեց հանկարծ մոր՝ չոր փայտի նման կմախքացած բազուկներում։ Յեշք լսեց սուլիչի ձայնը, Թոթիաուրին արագ, կարծես մատը կծածի նման, դուրս քաշեց իր ձեռքերը մոր թևերից և գնաց։

— Մոր նման խնամքով, վոչ, գործարանն ավելի յե, քան մայրական գորովը. դեպի գործարանն ունեցած սերը գերազանցում ե ել ավել. նա մեծ մայր ե մեծ...

Յեվ մտաբերելով, վոր նրան սպասում են չուրատեսակ, պողպատե սիրով, յերկաթե փաղաքշանքով մեքենաների մեծ-մեծ բազուկները, կուրծքը լայնացրեց և շտապ քայլերով բացեց կաշեգործարանի դարպասի դուռը։

\*  
\* \*

Այն ժամին, յերբ Թոթիաուրին արեւով և ընկերների աղմուկով լեցուն հրապարակը մտավ, յերկհարկանի տան սենյակներից մեկում, անկողնուց վեր

թուով մի յերիտասարդ աղջիկ: Սարսափած աչքերը տրորեց մատներով և անբավականությամբ նաչեց ամուսնուն:

— Մի փոքր դոնե պատիվ պահելիր, բնկեր, ապա մոտ վոր չպարպեցիր, լուսաբացին դուրսը չեցիր կարող հրացանն արձակել:

Վառուդի և ծխի հոտը բռնել եր՝ վողջ սենյակը: Անկողնում, գիշերային շորերով նստած Գիդոնն ակամա ծիծաղեց:

— Ուղեցի կոտորել ճանճերին, վորպեսզի բունդ չփախցնեն և հանդիստ թողնեն, վոր քնես:

Անիմաստ և տգեղ ծաղրը կայծակի նման կապվ Գոյանեյի սրտին:

— Գոնե պատերը խնայիր, լ՛նչու չես սենյակն ավեր դարձնում, կիր ու հող բոլորովին թափվել են, խողանոցի չի նման մեր սենյակը:

— Ձեռք վերցրու ոչինքնազուլթյուններից:

Գիդոնը հրացանը պառկեցրեց իր կողքին և պառկեց:

Գիդոնն անչափ հափշտակությամբ և սիրում հրացանաձգությունը, և այս սիրը կարծես հիվանդաշին բնույթ և ստացել նրանում:

Գիդոնն ակմբային «տիրի» մշտական հաճախորդներից և: Ծաշի վերջին կոպեկներն աչնտեղ և թողնում ապա քաշվում և պատի տակ և յերկար նայում հրաշան արձակողներին: Այդ վարկյանին, այդ ուրիշներն հարկե Գիդոնից ավելի յերջանիկ են, քանի վոր նրանց շրջաններում դեռ միջանի կոպեկներ են մնացել: Յեթե նանկարծ տիրի ցանկապատին մոտենա Գիդոնի ծառայողներից մեկը, պրծավ, ձեռքից բաց չի թողնի նրան,

անվերջ կխնդրի, վոր իր հաշվով գեթ մի անգամ հրացանն արձակել տան: Մերժողին մի լավ կհայհոյի, գաղտուկ մեջքի կողմից կմոտենա, նրա նշան դնելու ժամանակ հանկարծ կզարկի ձեռքին և դրանով կխանգարի նրան նշանին խփելու: Բավական ժամանակ ինչ նա ցանկանում եր ունենալ սեփական հրացան: Վորսորդական միության խանութում նա մի որ տեսավ «Գեկո» սիստեմի հրացան: Վորոշեց անպատճառ առնել և սկսեց համապատասխան գումար հավաքել: Հենց այդ որբերում, լուր տարածվեց, վոր շուտով կազմակերպվելու չե կոմիերիտական բջիջների հրացանաձիգ խմբերի մրցութուն: Գիշերը հուզվեց անմիջապես ուզեց գործի անցնել:

— Մեր բջիջում դեռ ևս կազմակերպված չե հրացանաձիգների խմբակ, ուրեմն յես պիտի գրկվեմ մրցությանը մասնակցելուց:

Մտածեց նա և խիստ անհանգստացավ. առաջիկա բջիջի ժողովներից մեկում որակարգի նյութ դարձրեց հիշյալ խմբակի կազմակերպման հարցը: Բոլորն սկսեցին բարձր ձայնով ծիծաղել:

Մեկն ասաց:

— Այնպիսի տոնով ես խոսում ու պնդում, վոր կարծես թե՛ մեզնից մեկն ու մեկը հակառակ ե այդպիսի մի խմբակցության կամ սեկցիայի կազմակերպվելուն:

Մյուսն առարկեց:

— Յերբ քեզ ընտրեցինք և հավատացինք ամեն ինչ, վոչինչ չշինեցիր, այժմ բյուրոյի ընտրության ժամկետը մոտեցել ե, մեր խմբակցության գործունեյության մասին հաշվետու պիտի լինես բոլոր անդամ-

ների առաջ, իսկ դու առաջ ես քաշում նոր խնդիր, վոր դու խղ պրծաղնես. — ալդ քեղ չի հաջողվի:

Յերրորդը վողջունեց:

— Ինչ լեղավ, յեղավ. ծարավի յե նորանոր աշխատանքների, ուղում ե գործի մեջ թարմություն մտցնել, թող մտցնի...

Մի ուրիշն ել ալ կիրաւ բացատրություններ տվեց, վերջում հանձնարարվեց Գիդոնին կալմակերպիլ հրացանաձիգների խմբակ...

— Տեր աստված — հանկարծ բացականչեց Գիդոնը, յերբ հրացանի կոթն ուղղեց աջ ուսին, իսկ աչքերով սկսեց խողովակի ուղղությամբ դիտել նշանը: Ամաչեց:

— Աստծու հերն ել... ասաց ինքն իրան հազիվ լսիլի ձայնով: Յերբ ցանկապատին մոտեցավ ե վերջնախանապես նշան բռնեց, ձեռքերն սկսեցին դադալ: Այնպիսի հողնածություն զգաց, վոր կարծես հեռու ճանապարհից յեկած լիներ: Այս վերջին հրացան սրձակելս կվորոշի ամեն ինչ, կամ կհանձնեմ, կամ կվատակեմ առաջին մրցանակը: Սիրտն սկսեց արագ բարախել: Քրտնքի մեջ կորած՝ ինչ վոր բան քթի տակ մըթմըթում եր նրա շրթունքներից, նորից լավեց աստծու անուն:

— Աստծու հերն ել... կրկնեց նորից ե հրացանն ուսից վեր բերեց:

— Վզնոցս խեղդում ե ինձ, — մտածեց նա:

Վզնոցն արձակեց, սակայն ինչ-վոր խեղդում եր նրան, նա չհանդավ, նույն վիճակը շարունակվեց: Նայեց լիտ. միքանի քալլ նրանից հեռու լուռ կանգ-



նած եր Վորոբյուլը: Յերկուսը պետք և մրցման դուրս  
գաին Գիդոնին ու նա. դրա համար յերկուսն ել հա-  
վասար քանակով վերցրիլ էին հրացանի գնդակներ:

Այս յերկուսից ո՞վ և առաջնութունը տանելու:

Բոլորն ևլ լարված հեռաքրքրությամբ ու շնչա-  
սպառ սպասում էին հրացանի վերջին հարվածին:  
Վորոբյուլը մինչդեռ, անտարբեր կանգնած ժպտում էր  
և հանգիստ սպասում իր հերթին:

— Այնպես անդարդ ու հանգիստ եր կանգնած,  
վոր մարդ կկարծեր, թե մրցման շքանշանն արդեն ստա-  
ցած՝ կախված և նրա սենյակում: Գուցե հույս ունի,  
վոր կհաղթի:

Գիդոնին ջղայնորեն քաշեց իր կողմը պատրոն-  
ների արկղը և աչնախի անախորժ զգացում ունեցավ  
վոր կարծես տաքության մեջ լինելու. բուզը չորացել էր:

— Ըսկեր, ինչո՞ւ չես ուշացնում, — կանչեց ժյու-  
րիի անդամներից մեկը: Գիդոնին սթափվեց, գործի  
անցավ, յերկու հաստատուն քալլ արավ մինչև ցան-  
կապատը, արագ ցած բերեց հրացանը և միքանի  
անգամ ձիգանի պոչը քաշեց:

— Կպավ նշանին, — կանչեց ժյուրին:

Գիդոնին յետնալեց և հրացանի ձախից հետաքրք-  
րված ընկերներին նայելով՝ հիմարի նման ժպտաց:

— Լավագուցն հրացանաձգության համար Գիդոնի  
Ալանիային: — Որական յերկու անգամ գոնե, կկարդա  
հրացանի կոթի վրա արծաթե տառերով մալագրու-  
թյունը: Խնամքով պահում և վաստակած մրցանակը:

Գործածելուց հետո քանդում է, մաքրում, նորից  
սարքում: Սեղանն ամբողջովին ծծված և նավթով ու  
ձեթով, իսկ արկղները հրացանի գնդակներով, վառո-



դով և զանազան տեսակի գործիքներով: Պատի վրա  
չես գտնի գեթ տերիի չափ ազատ տալածություն, ուր  
ծակված կամ քանդված չլինի գնդակից: Ազատ որերն  
ու ժամերն անցե կացնում անտառներում, դաշտերում  
և ձորերում:

Հաղնվից Գայանեն: Ծխի ու մրի մեջ կորած  
ողջախը վառեց՝ թեյը տաքացնելու համար:

— Վեր կենալու մասին չե՞ս մտածում:

— Թեյն այստեղ կխմեմ, պատասխանեց Գիգոնին:

— Վերկենալը միայն թեյի խմելու համար ե  
անհրաժեշտ: Ի՞նչու չես ուշանում, չե՞ վոր շաքաթոր-  
լակ պիտի գնաք:

— Թեյ տուր խմեմ, — ընդհատեց նրա խոսքը  
Գիգոնին և աթոռը քաշեց բարձի մոտ:

— Վերկաց ու խմիր, կաթված հո չե՞ս ստացել, —  
ջղախնայած պատասխանեց Գայանեն:

Յերբ Գայանեն այնչափ մեծացավ, վոր այլևս  
ներա համար չեկին կարողանում դեյրացու ձեւել մոր  
բանեցրած գուլնդգուլն չթի շապիկներից, չերբ Գայա-  
նեյի բաժին մի կտոր հացը զգուլապես ազդեց ամբա-  
րարում գտնված ալյուրի պաշարի վրա, ծերունի  
հայրը գլխի ընկավ, վոր իր ժանգոտած ձեռքերն ել  
ալելի պիտի աշխատեն, քրտինք թափեն բոլորին բա-  
վարարելու համար, սակայն վճռաեղից:

Մի որավար հողի վրա վորքան ուզում ես քըր-  
տինք թափիր, տանջվիր, չեգիպտացորենը (սիմինդը)  
հասնելիս՝ հո չի կրելու իր վրա իննը քոնթրուշ, կամ  
լորին՝ բազուկի հաստությամբ լորապարկ: Սկզբում

հազիվ յերկու հոգի ելին, կին ու մարդ, մի որավար հող ունեւին, հազիվ եր բավականացնում նրանց: Վերջում իննը հոգի յեղան, իսկ հողաբաժնին մի թիզ հող անգամ չավելացավ. այժմ լեղած բերքն այլևս չի բավարարում. ուստի մի գեղեցիկ որ, 14 տարեկան Գայանեյին ուղարկեցին քաղաք՝ իբրև տնային ծառայող հարուստ բարեկամներին մեկի մոտ:

— Հարազատ վորդու նման կոհանմ, ամենինչ կսովորեցնեմ, կդաստիարակեմ այնպես, վոր աչքը բացվի, լափն ու վատն ջոկի իրարից, տուն ու տեղ կառավարել կսովորեցնեմ, վերջապես մի լուսավոր մարդ կդարձնեմ:

Այսպիսի խոստումներ տվեց բարեկամը, յիբր արցունքոս աչքերով ծնողները բաժանվում ելին իրանց սիրասուն աղջկանից:

Պայմանը կատարվեց: Սրտացավությամբ և առանձին հոգատարությամբ աշխատում ելին Գայանեյին ռջախի վորդի դառնել, վոր խեղճ աղջիկը պատրաստ եր յուրաքանչյուր ըոպե ասելու, «թե՛ — վոչինչ չեմ ուզում ձեզնից, խնդրում եմ ազատեք ինձ այստեղից»... Սակայն ռւր կարող ես գնալու, ռւր...

Գյուղում չքավորության ու թշվառության ճիւրաններում տապակվող մի ընտանիք, քաղաքի ճամբան ձվ եցուլց տալու նրանց: Իսկ Գայանեն ապրում եր հարուստ բարեկամի ընտանիքում: Առավոտներն ամենից առաջ պիտի վերկենար, վորպեսզի յերեկոյան կլ ամենից ուշ քնեի:

Ծանր աշխատանքի տակ տնքում եր Գայանեն, հալ ու մաշ եր յեղել, մարդկային գուլն չեր մնացել նրա դեմքին. միակ ազատ շունչ քաշելու վարկյան

վոր նա ունեւր — դա՛ պատկերուց մինչև քունը տանելն եր: Խոհանոցի մի անկյունում միայնակ մտնում եր անկողին և հանձնվում մանկական հիշողութիւններին ու գյուղական կյանքի քաղցր յերազներին:

Որերն անցնում էին իրար յետեից և շարունակ հաջորդում իրար: Գայտեայի դրութիւնը վոչնչով չեր փոխվում, միշտ նույն տանջանքը, միշտ նույն ծանր աշխատանքը, մինչև վոր 18 տարեկան հասակում, մի գեղեցիկ ուր, իր հոգնած ձեռքերով բացեց կոմբերիտական միութեան գրասենյակի դուռը:

Գրանից հետո հսկայական արագութեամբ արմատապէս փոխվեց նրա սովորական տանջանքներով լեցուն կենցաղը, նոր հորիզոններ բացվեցին նրա առաջ: Ազատ կերպով սկսեց շունչ քաշել և կարծես 18 տարեկան հասակում առաջին անգամ զգաց, վոր ինքը մարդ է և կարող է ապրել կյանքում համապատասխան իր ցանկութիւններին և պահանջներին: Այս գիտակցութիւնը բացեն նրա աչքերը և հազար անգամ անցյալներում տեսած մութ պատկերներն ու յերեութիւնները՝ սկսեց հասկանալ ու լուսաբանել տարբեր մտանցումներով, տարբեր ակնոցներով:

Լազուր յերկնակամարի սքանչելի հովանին, տերեւակալած ծառերի ու ծաղիկների անուշ բուրմունքը, փողոցների աղմուկը, մարդկային ուրախութիւնն ու տխրութիւնը, նրանց աշխատանքներն ու ձգտումները, վորոնցից նա մինչ այսօր չեղոքացած ու կղզիացած եր զգում և ոտար իր համար: Այսօր նա զգում է արդեն ալդ բոլորի մեջ հարազատ: զգում է ու հասկանում արդեն, վոր ինքը՝ Գայանեն ևս մի անբաժան մասնիկ է այն բազմազան գույներով նկարված պատ-

կերի, վորի անունն է կյանք, յիւուն պայքարի ու ժրաջան աշխատանքի կենցաղ:

Գայանեն ազահաբար լծվեց կոմիերիտական աշխատանքների: Նրա հասարակական աշխատանքների լայն ասպարեզը կամաց-կամաց բաց եր անում նրա աչքերը և որեց-որ նրա մեջ կուտակվում եր խիստ ատելություն այն բոլոր չերևույթների ու մարդկանց դեմ, վորոնք արգելք ելին լինում նրա ալս ձեռն աշխատանքներին և մթազնում նրա զիտակցությունը:

Այդպիսի կաշկանդիչ չերևույթներից մեկը համարում եր նա իր ամուսնուն, իր ընտանիքը — ոջախը:

Բարեկամից հեռանալուց հետո Գայանեն ժամանակավորապես տեղավորվեց Թոթիաուրու սենյակում:

— Մինչև սենյակ գտնելդ, չես իմ սենյակը կարող եմ տրամադրել քեզ, իսկ ինքս կփոխադրվեմ Բեքաուրու սենյակը, — ասաց Թոթիաուրին:

Ազատ չերեկոները միասին ելին անցկացնում: Թեյնոցը դնում ելին ոջախի վրա, թեյը յեռացնում, ապա նստում չերկուսով թախտի վրա ու Գայանեն դառնում եր ամբողջովին լսողություն: Թոթիաուրին կարդում եր քաղաքական գրագիտության վերաբերվող բրոշյուրներ, կամ պատմում հեղափոխական սոցյալ ունեցող հայտնի դեմքերի կենսագրությունները: Շատ անգամ ինքն ել եր իր պատմածներից վոգեվորվում, այդ վաչրկյանին նրա խոհուն ու գրավիչ դեմքի վրա սկսում եյին բոցավառվել նրա փայլուն աչքերը: Այդպիսի վաչրկյաններին նրա դեմքը ստանում եր խոհուն արտահայտություն. նրա չուրաքանչյուր խոսքին ու դարձվածին հետևում եր նաև ասածների կենդանի պատկերավորումը և նրա, նյութին համա-



պատասխան մեկը մյուսին հաջորդող դեմքի արտահայտութիւնները՝ խիստ կերպով բնորոշում ելին նրա պատմած նյութը:

— Յերանի լէրը, յէրը պիտի կարողանամ հրով վառել մեկ ուրիշին ինչպես դու լես վառում իմ ներսում բոցավառ կրակը և հնազանդեցնում հպատակեցնում ես ինձ. — մտածում եր ինքն իրեն Գայանեն:

Ինչպես մի փորձված քանդակագործի ձեռքին կալի մի կտոր ալնպես եւ լիս, ամբողջովին դտնվում ելի նրա խոսքերի ազդեցութեան տակ:

Ուր գարկում, այնտեղ եւ իր համապատասխան հետքն եր թողնում, վորի ջնջելն այլես անհնարին եր: Թոթիաուրին գեղեցիկ չեր: Սանտիմենտալ վեպերի հեղինակները լերկորդ կարգի հերոս աղջիկներին անգամ չեյին սիրահարեցնի նրա հետ, չերը տեսնելին նրա դեմքի անկանոն ու անհամաչափ զծագրությունը և դուրս ընկած, մանգաղի նման ծովածքիթը, սակայն այս տգեղ դեմքն այնպիսի կենսունակությամբ եր բարախում, այնքան հուզիչ արտահայտություն ուներ համապատասխան իր ներքին ապրումների, վոր հաճախ մտածում եր Գայանեն, — յես չգիտեմ, ընդհանրապես ինչին են ասում գեղեցկություն, բայց ով եւ վոր ոժտված ե այդ գեղեցկությամբ, առաջին հերթին առաջնություն պիտի տրվի Թոթիաուրուն:

Մի յերեկո, մինչև ուշ գիշեր մինչև գիշերվա ժամ լերկուսը այսպես քաղցր գրուցում ելին նրանք: Սենյակում հանգստացնող ու դուրեկան տաքություն եր:

— Ինչպես ծուլացել, տեղիցս չեմ ուզում շարժվել, տուն գնալ կարծես չեմ ուզում:

Կատարյալ անկեղծութիւն մը հանկարծ դուրս  
թռավ Թոթիաուուրու բերանից ակամա խոստովանանքը:  
Յերկարատե նստելու հետեանքով, վոտքերի մկանունք-  
ները կուչ ելին լեկել, վոտքի վրա կանգնել դժվա-  
րանում եր, ապա մտածեց, չլինի՞ թե իր արօրասանած  
խոսքերին ալ մեկնութիւն տա Գայանեն, ուստի  
անմիջապէս ավելացրեց:—

— Յտեսութիւն, վաղը կամ մյուս ուրը կհան-  
դիպեմ. — ձեռքը միկնեց կարծես մոռացաւ ձեռք տա-  
լու նշանակութիւնը, իր ձեռքը յետ չքաշեց և միքանի  
վարկյան ձեռք-ձեռքի բռնած մնացին կանգնած:  
Պահ մի դուրեկան դող անցավ նրա ամբողջ մարմնով,  
շնչառութիւնը դժվարացավ. Գայանեն ասաց, —

— Մնա, մի գնա:

Մյուս յերեկո Թոթիաուուրին միքանի գիրք և  
անկողին վերցրած՝ տեղափոխվեց Բեքաուուրի մոտից...

Գայանեն մի տարի անցկացրեց լեռներում,

Այստեղ կազմակերպված եր կոմյերիտական  
բջիջ, վորի կազմի մեջ մտնում ելին 11 առողջ ու  
պնդակազմ լերիտասարդներ: Ջելլաանի նման զգուշ  
լեռնական աղջիկները հեռու ելին պահում իրենց և  
չեյին մոտենում բջիջի անդամներին: Միծուրի ավա-  
նի մեջ կղզիացած բջիջը դրսեվորեց — լույս աշխարհ  
հանեց Գայանեն. դեռ ձյան առաջին փաթիլները չեյին  
իջել Միծուրիի բարձր սարալանջերին, յերբ ձեռքերի  
անկարգ շարժումով աչդ բջիջի խմբակցութեան մեջ  
մտավ առաջին աղջիկ-անդամը: Յերեկոյան դեմ աչս  
աղջկա կողքի վոսկորները ցավում ելին և ձախ ալտը

կարմրած՝ վրան նկատելի ելին մատների հետքեր։ Հայրը ձեռնել եր նրան։ Միամիտ հետո շորի մեջ խլ-նամքով փաթաթած՝ կրում եր իր վրա կոմյերիտական տոմար։

Գայանեն միքանի շաքաթ թեմկոմի քարտուղարի հետ ապրեց։ Այս մարդն ուրվականի նման շարունակ հետևում եր նրան ու նրա ականջին փսփսում սիրահարական խոսքեր ու դարձվածներ, հայտնում եր իր ջերմ սերը և խոստանում հավատարմություն։

Այս բոլորը մինչդեռ Գայանեյի համար անհասկանալի ելին և նույնիսկ ձանձրուլթ առաջացնող։

— Ի՞նչ և պատահեց, ընկեր, ի՞նչ ես կաշառքի նման ամեն վայրկյան հրամցնում սերդ։ Այնպես ես կրնիդ կպել ու բաց չեա թողնում իմ ոճիքից, վոր կարծես թե մի րան թաղցրած լինեմ և յերդումով ուզում ես խոստովանեցնել ինձ ու դուրս քաշել աչդ պաղտնիքը։

— Շուտ շուտ ուզում եմ քեզ մոտ լենել, քեզ հետ լինել, ասում և սիրահար քարտուղարը։

— Յերբ ժամանակ ու ցանկություն եմ ունենում, դալիս չեմ քեզ մոտ, — պատասխանում և Գայանեն՝ նայելով քարտուղարի անասնական դեմքի արտահայտությանը։

Քարտուղարը չի դադարում Գայանեյին հետապնդելուց. վերջինիս համար վտանգն անխուսափելի չիր։ Նրա սիրո մեջ Գայանեն տեսնում եր իր անհատական ձգտումների սանձահարումը — կղզիացումը։

Մի պատահարով բոլորովին ակնհայտ դարձավ այս կասկածը հետազայում։

Հանգամանքներն ու գործերն այնպես դասավորվեցին, վոր առավոտյան գնաց հարևան թեմերից մեկը: Յերեկոյան այդ թեմի ընկերներից մեկը նրան ճանապարհ դրեց — ուղեկցեց մինչև տուն: Ընկերոջը տուն հրավիրեց, հյուրասիրեց, հանգստացան, ընթրիք արին: Հյուրը պատրաստվում էր տուն վերադառնալ, յերբ հանկարծ դուռը բացվեց և ներս մտավ քարտուղարը:

Կասկածից մթնել էլին նրա աչքերը և ընկերոջ հեռանալուց հետո, այս կասկածները բարձր ձայնով արտահայտեց. —

— Հինգ անգամ գիշերն անց եմ կացրել նրա մոտ և արդեն կարծում եմ, վոր ինձ գնել եմ, — մտածեց Գայանեն:

Նրանք հեռացան:

Յերբ յերկաթուղային գնացքը մոտեցավ Թիֆլիսի կայարանին և լսվեց սուլիչի ձայնը՝ Գայանեն ահանջալուր էր լինում արդեն քաղաքի կենսաբեր խուլ աղմուկին և առաջին հերթին նրա մտապատկերների առաջ կանգնում էր Թոթիաուրին:

— Դեռ կմտնեմ շրջկոմի գրասենյակը, ապա կերթամ նրան տեսնելու. — սակայն քաջներն իրենք իրենց դեպի Թոթիաուրու բնակարանն ուղղվեցին. — սիրտն էլ ներսից կարծես ներդաշնակում էր նրա այս արարքին:

Թոթիաուրու առաջ չէր կանգնած այլևս նախկին փոքրիկ Գայանեն (այսպես էր անվանում նրան առաջ), այժմ արդեն բավական հասակն առել, հասունացել, մեծ աղջիկ էր դառել:

Գայանեն արդեն մի տարի աշխատել էր լեռնաբնակների մոտ:



Հրճվեց և խիստ ուրախացավ Թոթիաուրին, չերբ հանկարծ նայեց Գայանեյի առողջ և ամբողջագամ դեմքին, գեղեցիկ կաղմվածքին. նրանց վրա գլուղական աշխատանքն իր վորոշ կնիքն եր դրել, ուրախ եր նա, չերբ նայում եր նրա յերիտաքարդական ավյունով բարախող վարթամ կրծքին: Ուրախ եր և հրճվում եր Թոթիաուրին, սակայն չերբ պատուհանից ներս թափանցեց յերեկոն՝ իր հետ բերելով հնուց ծանոթ, աչնքան զրավիչ մեղմ ու հանգստացնող լուսթյունը՝ դարձավ Գայանեյին ու ասաց. —

— Գիշերը կզամա:

Գայանեն ցնցվեց. — յերեի վոչինչ չգիտի, որտեղից պետք ե իմանա: Թոթիաուրուն հանդիպելն ու նրան աեսնելն այնքան եր ուրախացրել Գայանեյին, վոր քոլորովին մոռացել եր, թե ինչու չեր յեկել նրա մոտ:

— Մի միտք տանջում ե քեզ, հեռացրու՝ այդ տանջանքը քեզնից. — անցավ նրա մտքով այս դառն մտածմունքը: Ի՞նչ ե նշանակում այս, ամիսոսմնք, զղջում, թե՞ մի այլ բան:

Նստեց Գայանեն և սկսեց պատմել ամեն բան: Թոթիաուրին վոտքի կանգնեց, զրպաններն ուռցրից բռունցքներով և խուլ սուլոցով սկսեց անց ու դարձ անել սենյակում, հանկարծ դառնորեն սկսեց քրքլալ. —

— Տեսնում ես վորքան դժվարանում եմ մի բան անգամ արտասանել: Այսպիսի նման յերեվույթներ կատարվել են նաև իմ ընկերներից շատ-շատերի կյանքում, նրանք հուզվել, դառնացել, զայրացել են: Յես եդ ժամանակ ծիծաղում եյի նրանց վրա,

վորովհետև վոչինչ վատ բան չեկի նկատում նրանց կանանց արարքների մեջ և մինչև իսկ այս առթիվ հատուկ զեկուցմամբ հրապարակ չեկա քննարկին նիստում. սակայն այժմ, յերբ խնդիրն եմ անձնակաւին եւ վերաբերում, չես դժվարանում եմ հաշտվել... հանկարծակի չեղավ այս ամենը և բոլորովին անսպասելի, հենց այդ պատճառով ել և՛ս առավել մեր մեջ վորեւ անհամաձայնութիւն կամ դժգոհութիւն տեղի չի ունեցել...

— Ի՞նչի հետ պիտի հաշտվես, ի՞նչնե դժվարանում, ի՞նչնե քեզ ծանր թվում. - ուզում եր հարցնել Գայանեն, սակայն զսպեց իրեն: Քրքրել այս խնդիրները և բացատրութիւններ պահանջել՝ ավելորդ պատասխանատւութիւնների խնդիրներ հրապարակ կգան և կարիք կզգացվի զանազան ինքնարդարացումների:

Սովորաբար հանցանք գործողները—մեղավորներն են, վորոնք աշխատում են առհասարակ արդարացնել իրենց: Գայանեն վոչվոքի իրավունք չի տա իր վրա մեղադրանքներ բարդելու, նա ինքն ազատ եւ և ամեն տեսակի պայմաններով կարող ե հանձնվել տղամարդկանց:

Նայեց թոթիաուրու մտադրող ճակատին.

— Ի՞նչ ե պառահել, ինչ՞ա չե այդպես մտադրող, ի՞նչ են պահանջում ինձանից:

Թոթիաուրու լուութիւնը զայրացնում ե Գայանեին:

— Նա իր լուութիւնը չի բերի մեղադրում ե ինձ:

Ուրիշ անգամներ մենք այսպիսի լուութիւնը չենք կարող ժամիր անցկացնել: Անշուշտ խոսք ու

զրույց կունենայինք իրար հետ, իսկ խոսակցության նյութը պահասակու գեպքում՝ բաժանվում էյինք իրարից և կամ միասին գնում զրոսանքի։ Ի՞նչ դեպք էլ լիներ, համենայն դեպս լուռ չեկինք մնալ — իսկ ալժմ, ացնպես ենք լուկ յերկուսս ել, կարծես ինչ-վոր անսովոր բան և կատարվել և մեր փոխհարաբերությունը խախտվել և։ Իր լռությամբ նա, ալս հանգամանքն ավելի ակնհայտ և դարձնում — ավելի ընդգծում և ալդ յերևույթը։

Իբր ապացույց այն բանի, վոր վոչինչ չի պատահել և վոչինչ չի փոխվել իրենց փոխհարաբերության մեջ՝ Գայանեն սկսեց խոսել նրա հետ գալիք աշխատանքների մասին. —

— Սա՛կայն դու պարտավորվեցիր նամակ գրել ինձ և հայտնել քո և քարտուղարի... չես սպասում ելի քեզ, կարոտում ելի...

Բարձր ձայնով պատասխանեց Թոթիաուրին։

Գայանեյի դեմքը լուսավորվեց, պայծառացավ և կենդանի արտահայտություն ստացավ։

— Իարձյա՛լ պարտավորություններ, Թոթիաուրին առանց նրա թուլավա՛ւության թեթեացում ու հեշտացում և այն հանդուլցի բացումը, վորն այնչափ վարպետությամբ կանչում ու գունավորում եր ինքը։

Մոտեցավ, ձեռքերը դրեց նրա ուսին և աչքերով շեշտակի նայեց նրա աչքերին։

— Թող տարրինակ չթվա. չես լեռներում անցկացրի մի տարի. այդ ժամանակամիջոցում դու ճանաչում էյիր բացի ինձանից, վորեւ ուրիշ կլի՞ն։

— Հիտո ի՞նչ։

Բացականշեց թոթիւաւրին, բայց նույն վայր-  
կլանին շրթունքները կձեց: Գլխի ընկալ.— Թե մի-  
քիչ հետո — նրա վողբերգական ձեռով մտքերի մեջ խո-  
րատուզվելն ինչպիսի ծաղրի պիտի արժանանար Գա-  
յանեյի կողմից: Անմիջապէս բերանը բացեց, վոր  
խոսի և վորեւե կերպ պատասխանի. սակայն Գայա-  
նեն միջոց չտվեց, ձեռքերը կանթեց կողքին, մեջքը  
ծռմռելով մոտեցաւ նրան և հաղթական դիրք ընդու-  
նելով՝ նախեց ուղիղ նրա դեմքին ու քրքջաց:

— Հետո, ինչո՞ւ ինձ չհայտնեցիր այդ մասին:

. . . . .  
Յերկրորդ որը նրանք միասին դուրս չեկան և  
ջիջի գրառենյակից:

Գայանեն ասում էր.—

— Միքանի որով ուղարկում էն ինձ գալատ,  
վերադարձին ուղում եմ մտնել վորեւե ձեռնարկության  
մեջ աշխատելու:

— Ժամանակ ե արդեն,— համաձայնում էր թո-  
թիւաւրին.— ձեռնարկությունն արդեն ալ աշխարհ և,  
հաղար Բուխարին ել վոր յուրացնես, ալնուամենայ-  
նիվ դարձալ պակասավոր կզգաս քեզ և դատարկ չոր  
Ֆրագներով հեռու չես գնալ, տեսակետներդ կղրվեն  
նեղ—սահմանափակ շրջանակի մեջ: Մենք ունենք մի  
բավական հին անկուսակցական հրանդիչ. յերեկ ձեռք  
բերինք Խորհրդալին Միության մի բավական մեծ  
քարտեզ և կախեցինք ակումբի պատից, շատերս հա-  
վաքվեցինք այդ քարտեզի շուրջը և մրցում էինք  
իրար հետ, թե ով ավելի հաջող և լավ ցույց կտա  
նրա վրա զանազան քաղաքներ:

Միթե անկուսակցական հրահանգիչը չգիտէ, վոր



Ուղբեկատանը և Տաջիկըստանը գտնվում են Խորհրդադային միութեան սահմաններում: Գիտե իհարկե, բայց վերտեղ են գտնվում, քարտեղի վոր մասում: Ամբողջ մի ժամ տանջվեց—չարչարվեց, բայց չկարողացավ դրանց անդերը վորոշել: Մեր կյանքը հսկայական քարտեղ և կենսուրախ լեռներով, արցունքների գետերով, աշխատանքի և բազմազան ջանքերի քաղաքներով, հուշերով ու արդելքներով զարդարված: Վորպեպի վորեւ անկյուն աննկատելի ու անհասկանալի չմնա, հրահանգչի նման չպիտք և տարուբերվեր, թե կամ աշատեղ կլինի, կամ աշնտեղ: Փոփոխական և մեր կյանքի քարտեղը. նալում ես, ուր չերեկ գոյություն ունելին ուրախություն.— կենսուրախ լեռներ, վաղը նրանց փոխարեն նշմարում ես բերանարաց փոսեր ու ձորեր. գիտակցում ես արդյոք, վոր դու յիւ մասնակից ես ալդ փոփոխումներին, արդյոք զգում ես, վոր աշն վերտեղենդանացմանը մասնակցում ես նաև դու: Վե՛հ, ալդ գեպքում հրահանգչի նման շշմած կըկանդնես քարտեղի առաջ, գլուխդ կկորցնես և սխալ կհամարես աշն ձեռնարկած քայլը, վոր աշխարհն ընտրել եր գալիք լավ սրերի համար:

Խաչածեղ փողոցի մոտ նրանք բաժանվ յին իրարից:

Թոթիաուրին գնաց գեպի ելեքաբաքարչի կալանը:

Գալանեն իր նալվածքով հետևում եր ու նալում գեպի մի կողմ գնացող ընկերոջ ծոծրակին.—

— Ընկեր Թոթիաուրի, կանչեց նրա յետից:

Թոթիաուրին չեա դարձավ:

— Մի բան պիտք և ասելի... նկատելի չեր ցըր-

վածութիւնն.—Եթե հիշում ես, յես վոր լեռնական-  
ների մոտից վերադարձա, ալն յերեկո, յերբ դու ինձ  
ինչ վոր պարտավորութիւններ յասին ելիր հիշեց-  
նում, չգիտեմ ինչո՞ւ, ինքս ել չգիտեմ, բացառել չեմ  
կարողանում, մեջս կասկած մտա՞վ, վոր դու շատ ես  
փոքրացել աչքիս, ոտաբացել ես ուզում եմ ասել,  
վոր դու դարձյալ մեծ մարդ...

Վոչ, իսկական կոմյերիտական ես:

Նորից ձեռք տվին իրար:

Որերն անցնում էին որերի հետեից. Գայանեն  
աննկուն եւ ևշալունակ թաղված աշխատանքների մեջ:  
Նրա ապրուստների ու կենցաղի ճամբին հանդիպում են  
մի շարք տղամարդիկ. վորոնք առաջին որը սեր են  
հայտնում, յերկրորդ որը՝ հատուկ ցանկութեամբ փա-  
թաթվում-գրկախառնվում, յերրորդ որը՝ կասկածներ  
են մտնում. խրատներով ու դժգոհելով դիմազերծ են  
լինում. իսկ չորրորդ որը...

Չորրորդ, որը Գայանեն հեռանում եւ նրանցից,  
ամեն տեսակի սիրուց ու ընտելանալուց փախուստ եւ  
ռալիս: Մարմնական խնդիրը նրա համար նույնպիսի  
կարեւոր պահանջներից ե, ինչպես հացը, ոգը: Թարմ  
եւ ուժով լինի հացը, մաքուր եւ առողջարար ոգը, ամեն  
տեղ կարող ե կշտանալ, ամենուրեք կարող ե շունչ  
քաշել. ե չի հասկանում Գայանեն, թե ինչո՞ւ բոլոր  
տղամարդիկ ցանկանում են միայն իր հետ ապրել,  
մեկի հետ ապրել, չի կարողանում Գայանեն հասկա-  
նալ նրանց դժգոհութեան հիմքը ե ժամանակ ել չու-  
նի աչք մասին մտածելու:

Խորհրդային հիմնարկներից մեկում Գայանեն  
ճանաչում եր մի վարիչի, վորին համարում եր գոր

ծին գիտակ և փորձված անձնավորություն։ Գալանեն շատ հաճախ այդ վարիչին հանդիպում եր բանավորների նորարաց ակումբում։ Յերբ նրան շրջապատում եյին մարդիկ, վարիչը խոսում եր բարձր ու հասարակական արժեք ներկայացնող խնդիրների մասին։ Սակայն հենց վոր ցրվում — հեռանում — էլին նրա ունկնդիրները, վարիչը նույնիսկ, յերբ խոսքը կիսատ ել թողած լիներ և միտքը ղեռնս չավարտած՝ խեղույն ընդհատում եր խոսքը և ամինջապե սիրալին զրույց սկսում Գայանելի հետ։

— Ի՞նչ ե գլուխս աանում, — մտածում եր Գալանեն. — միթե ինձ հետ, բացի սիրային խնդրից ուրիշ վորեւ խնդրի մասին չի կարելի խոսել ու զրուցել։

Մի անգամ յերկուսով նստան այդու խուլ ույկտ ընկած մութ անկյուններից մեկում՝ նստարանի վրա։ Գայանելի միջանի հուսադրական խոսքերից հետո, մեր վարիչը կենդանացավ և իր շարժումներին մի փոքր սանձարձակություն տվեց։ Վարիչն աշխուժացավ և հանկարծակի իր ձեռքը իրր թե պատահամբ դիպրեց Գայանելի կոնքին. անմիջապես ներողություն խնդրեց։ Այս բանը կրկնվեց միջանի անգամ, մինչև վոր «ներողություն» խնդրելը բոլորովին մոռացավ, մոռացավ նաև «պատահամբ» կոնքին դիպրած ձեռքը չևտ քաշել կոնքի մոտից։ Յերբ վարիչի գեմքը բավական փափկեց և սաժենանոց բոց ու բուսաթ ունեցող տղամարդը կծկվեց — կուչ յեկավ՝ ձեռքի շարժումներն արագացրեց։ Գայանեն հանկարծ վտաքի կանգնեց և սառը կերպով դիմեց նրան. —

— Եդ ի՞նչ բանի չևտ, ընկեր, ինչո՞ւ յես հողիդ

այդպէս կորցնում: Եդ քո խոսքերով ավելի լավ կունես, վոր քո մեքենագրուհիներին խելքից հանես:

Վարիչն այլևս ակումբում չեր յերևում, այնտեղ հաճախելը դադարեցրեց:

Այսպիսի ընկերոջ ել հանդիպեց: Հենց վոր Գայանեն սկսեց նրա հետ ապրել. այդ ընկերը բոլորովին դադարեցրեց իր գրոսանքներն ու ացեկությունները ուրիշ կանանց հետ, դադարեցրեց իր ացեկությունները ընկերներին, խուսափում էր նրանց հանդիպելուց և համարյա թե չեր մասնակցում ընկերական հավաքույթիներին, բջիջների նիստերին եւ քիչ-քիչ եր յերևում և ամբողջովին իր ուշադրությունը կենտրոնացրեց Գայանեյի վրա, մշտապես նրանով էր զբաղված: Այս յերևույթը նկատեց Գայանեն:

— Սա ել շրջանակների մեջ դնելու, ազատությունը սահմանափակելու ձևերից մեկն էր, ինքը, վորոշ շրջանակների մեջ դրեց իրեն, միայն նրա համար, վորպեսզի ինձ ել չենթարկի այդ նույն սահմանափակումներին:

Որերն ու շաբաթներն անցնում էին ու կորչում անհայտության մեջ, բացվում էին նորանոր գործեր: Մի անգամ իր ծննդավայր գլուղում, մի մեծ ծառի տակ նստած էր Գայանեն և յերեկոյան դեմ սպասում էր դաշտային աշխատանքից վերադարձող առողջակազմ յերիտասարդներին: Գալիս էին տղաները, հասակակից ընկերները, խմբովին, վորոնք առանձին հետաքրքրությամբ նայում էին Գայանեյին և անցնում:

Գայանեն զգուշությամբ վառում էր նրանց մեջ կրակ, ազդում նրանց գլխակցության վրա, վորպես-



դի միքանի շարաթ հետո, ալս նուէն ծառի ստվերում,  
ուրախ ու զվարթ բզեզների բզդոցի ներդաշնակ ձա-  
ների տակ՝ գումսը վեր առաջին նիստը՝ դուղակա-  
նորակազմ անդրանիկ բջիջի:

Անցնում էին որեր—ամիսներ, քալլ առ քալլ  
հետևում էր նրանց Գալանեն և ալս սովորական կյան-  
քը վոչնչով չէր խանգարվի, յերբ մի որ հանկարծ  
թոթիաուրին չասեր Գալանեյին.—

— Գալանե, դու գեկավար, ակտիվ կամչերիտա-  
կաններից ես, պետք է անդամներից լուրաքանչուրն  
աշխատի նմանվել քեզ, վորոշ չափով փոխարինի քեզ.  
Թե չես թնչ դուրս կգա սրանից,

— Ձեռն հասկանում, ինչ ես ուզում ասել:

— Դեղ վոր նմանվեն, նրանցից վոչվոք ոջախ—  
ընտանիք չի կազմելու: Ո՞ւմ համար յենք աշխատում:  
Մեր աշխատանքը հո մեղ հետ գերեզման չպիտի տա-  
նինք, կուսակցականութունը կանանց մեջ չպիտի  
խեղդի—վոչնչացնի մայրութունը. արորաներով փո-  
րը փչացնող կինը դեռևս չի նշանակում, վոր նա լավ  
կոմյերիտական է: Մեղ հարկավոր չես ալգայիսի գոհա-  
րերութուն: Հարկավոր է զավակ ունենալ, հասկա-  
ռում ես:

Յերեկոյան հոգն ընկել էր փողոցներում: Դեռ  
ոյը տաք էր, կարծես կեսորվա արևից տաքացած  
յերկնակամարը մոտեցած լիներ քաղաքին: Գալանեն  
շտապ քայլերով գնում էր դեպի տուն ճիշտ աշնակես,  
ինչպես կատաղած շան կծած մարդը՝ բժշկի մոտ:

Փողոցները լիքն էին մարդկանցով:

Մեկը նրա վոտքը կոխեց. մլուսն ուսով հրեց  
նրան, բայց Գալանեն վոչինչ չէր զգում, կարծես բաց  
դաշտով անցնելիս լիներ, սլանում էր արագ քալի-

րով Մի ցանկութիւն միայն ունիւր վորքան կարելի  
լի շուտ հասնիւ տունն և թաղվիւ միայնութեան մեջ...

Անցաւ իրկու ժամ:

Գայանեն պառկած եր մեջքի վրա, անշարժ:  
Հենց վոր փակում և աչքերը, անմիջապէս նրսական-  
ջին ևն հասնում թոթիաութեան խոսքերը. —

— Մեզ հարկավոր չե այդպիսի զոհարերութ-  
իւնը.

— Ո՞վ չի կամենում, թիւ,— մտածում և Գայա-  
նեն, բաց և անում աչքերը. կարծիս ուզում և տես-  
նել— նշմարել իրեն հարց տվողի դիմքը:

Ճրագը դրված և սեղանի վրա: Ապակին մաքր-  
ված և: Պատից կախված Լինինի նկարը սովորականի-  
ն լին ժպտում և նեղ. թագնված աչքերով. բոլոր  
իրերն իրենց տեղերումն են:

Ապա ինչո՞ւ յի Գայանիյին թվում, վոր ամեն  
ինչ տակն ու վրա յի յիղել. այսպիսի պարզ բերեցութ-  
եանի հանդեպ միթե գիտակցութիւնը, զգացողու-  
թիւնը կորցրել և:

— Աբորտներով փորը փչացրած... ուրիշ ի՞նչ  
կարող եր անել: Նրա վրա բարդված գործերը պահան-  
ջում եյին, վոր նա զավակների հոգսից ազատ լինի:  
Գայանեն հնազանդվեց իր վրա դրված պարտակա-  
նութիւններին և կատարում եր այն՝ բարեխղճաբար:  
Նրա յերիտասարդական կյանքի ամենավառվուրդն յոթ  
տարիները կոմյերիտական միութեանը զոհարերեց —  
բանից դուրս և գալիս, վոր այդքանը դեռ բավական  
չեւ որինակելի կոմյերիտականի անուն վաստակելու  
համար:

Մենք ալսպիտի զոհաբերություն չենք ցանկանում: Ի՞նչ զոհաբերության մասին ե խոսքը: Գալստենն իր կլանքի բովանդակ գործունեություն ընթացքում յերբեք չի զգացել, վոր զոհաբերություն ե անում: Արձրտ. զավակ... ինչպիս արտասանելու ժամանակ զվարանում ես նաե յերգել, ալնպիս ել անհնարին ե թվացել նրան ընտանիք կազմելը, տուն, ոջախ ստեղծելը, — ոջախը, ընտանիքը՝ բանտ ե: Բոլոր նրանք, ովքեր ցանկացել են իմ ամուսինը դառնալ առաջին հերթին վորոշ շրջանակների մեջ են գրել ինձ ե ազատությունից զրկել: Ձեմ ուզում, հարկավոր չե, լիս ս՛րում եմ հասարակական աշխատանք, լիս համիշտակվում եմ նման գործունեությունը ե ալսուհետե ել ամբողջ իմ ուժն ու կարողությունը պիտի իսպաս բերեմ հառարակական գործունեության. թվ կարող ե արգելք լինել ինձ. թվ իրավունք ունի զրկելու ինձ այդ ազատությունից...

— Զավակ ել ենք ուզում, հասկանում ես: — Ի՞նչ ե այս բառերն արտասանում Թոթիաուրու բերանով. — ամուսինը, թե կոմիերիտությունը:

Աչքերը լալն բացեց:

Կուտակված մտքերը ցիրուցան լեզան: Աչքերը ձգեց առաստաղին ե սկսեց տախտակները համարել:

— Ի՞նչ ես անում, ուր ես փախչում, փակիր աչքերդ, մտածիր ե պտտասխան տնւր ինձ. — ներսից ձայն ե տալիս մեկը, ե մինչ առավոտ այդ մտածմունքների մեջ եր Գալանին: Առավոտյան պատուհանին պսպղացող կենսաբեր արևն զիմավորեց ժլպտալով ե վերհիշեց անցրած գիշերը:

— Հիմարացել եմ, միթե չերեկ գիշեր անքուն

անցկացրեց ու տանջվեց Թոթիաուրին: Ի՞նչ լերկար գիշեր է անհրաժեշտ յեղել այնչափ պարզ խնդիրը վրձնելու համար,— խոսեց ինքն իրեն Գալանեն:

Միայն այն պահուն, չերբ նստեց նամակ գրելու, սիրտն սկսեց զարկել. —

— Ինչո՞ւ չես տանջվում, մի ցավիր անցրածդ մի տանջալից գիշերվա համար, շնորհակալ չեղիր, վոր սիրուն աչերդ չեն արժանացել չերկրորդ՝ ավել յերկար ու տարատուկ գիշերվան:

Այս նամակը ստացավ Թոթիաուրին՝ Կորուլեթի հանգստյան տանը:

Գալանեն գրում էր հետեյալը. —

«Թոթիաուրի, արդարացի յես:

Մեզ շրջապատող կյանքի չեռուղիների մեջ ուր զարմանալի արագությամբ սահում-անցնում են հասարակական բազմազան չերեույթները, ուր հարյուր հազարավորներ կորչում—անհայտանում են, ծնվում և սլանում առաջ. յես բարեբախտաբար չկորցրի իմ ինքնուրույնութունս:

Թոթիաուրի, հո տես՞ի ես յերբևիցե ձիարշավ, արագ վազքով, քամու նման սլանում են նրանք նշանակված ժամկետին տեղ հասնելու համար: Յերբ վոռքերն անգամ ջարդվելու լինեն ախուամհնայնիվ նրանք կանգ չեն առնի, գնում են, սլանում են՝ առաջ ու առաջ՝ մինչ վերջնակետը:

Յես ել, լծված ձիու նման եյի, դադատուկ ու անաղմուկ, մեջքիս բազմազան ու բազմաթիվ դործեր շալակած՝ սլանում եյի առաջ և շարունակ մտածում,—ահա վորտեղ վոր ե, վաղը կամ



մյուս ուրը հասնելու չեմ նշանակված տեղին՝ նավահանգստին, բնուս ցած կղենեմ և կմտածեմ սեփական կյանքիս, իմ գլխի մասին...

Սակայն գործերը գործերին եյին փոխարինում, նորանոր պարտականություններ հաջորդում ելին իրար: Յես մոռացել էլի, վոր մենք վերջակիտ չունենք, վորպեսզի կարողանալի մի վաղըով տեղ հասնել: Մենք չունենք ժամանակավոր ժամկետ ունեցող արշավ, վորի ավարտումից հետո, հանգիստ գնանք գեպի մեր վաթանը: Մենք պիտի քայլենք անդադար, անհատում և մեր հասարակական աշխատանքը մեզ համար պիտի դառնա իրրև ամենօրյա անհրաժեշտ պահանջ:

Հիշեմ ես քարտեզը, մտաբերում ես անհուսահեցական հրահանգներն:

Դու կարծում ես, յես չգիտեմ, վոր նոր ոջախ պիտի կազմենք. սակայն քարտեզի վրա տեղը չկարողացա ցույց տալ. չվորոնեցի, վերջաբանին եյի սպասումս...

Յեվ այսպես անվերջ:

Վերջում, մի անկյունում այնպիսի մանր տառերով եր մտկադրված — վոր հազիվ եր կարդացվում, կարծես գրողն ուզում եր տասել թե՛ սա կարևոր բան է, կարող ես կարդալ և չկարդալ:

Գրված եր — «Վաղը յես ու Գիդոնին ստորագրելու յենք արձանագրությունը»:

Այս բանը պատահեց ոպոստոսին: Աշունը վրա հասավ, ծառերի դեղնած տերևները դողդողալով վաչր թափվեցին և վորպես դեղին սավան սփռվեցին գետնի

վրա: Այս տերևները քամու հոսանքով մերթ ընթաց-  
նում, խտանում, խմբվում ելին իրար գլխի, մերթ  
ցրվում՝ զով-հով քամին տանում, զարկում եր Գա-  
յանեյի սենյակի պատուհաններին: Զեռն ել հասավ,  
բերեց իր հետ սառնամանիք ու խիստ ցուրտ: Պա-  
տուհանին կիտված ձյունը մերթ ընդ մերթ հալվում  
եր կեսորին. յերեկոները ցրտից սառչում ելին և ա-  
ռավոտը լուսաբացին Գայանեն տեսնում եր իր լու-  
սամուտից կախված շուջուխի նման սառցե լույաներ:  
Պարզ որերը հազվագյուտ եյին դարձել, արևը վաղուց  
չեր յերևում, սակայն այդ բոլորի փոխարեն՝ պարզ  
ու արևոտ եր Գայանեյի դեմքը:

Այս առաջ եր:

Արդեն մոտենում եր զարուհը, այսուր կիրակի  
յև, դուրսը՝ թեև թույլ, բայց արևի ճառագայթները  
խփում են գետնին, ամենուրեք կենդանություն և,  
նոր կյանք, նոր շունչ ե բուրում սմեն ինչից. ժպտ-  
տում-ուրախանում են բոլորը, սակայն չի ժպտում  
Գայանեն, կարգի չե բերում սենյակը. նրա շաբաթու-  
ների մեջ չի նկատվում նախկին կենսուրախություն  
ու աշխուժ-վառվառ կյանքը:

\* \* \*

Գայանեն նախաճաշեց, գլխարկը ծածկեց:

— Զմուռնաս կերստինկան հանպցնել:

— Ո՞ւր ես գնում:

— Տպարան, այսուր հրավիրել եմ անկուսակցա-  
կան կանանց ժողով:

— Զեմ լսել, վո՞ր կիրակի որը ժողով նշանա-  
կեն:

— Դու յերևի աչն ել չես լսել՝ վոր շաքաթոր-  
յակներից առհասարակ բացակայել չի կարելի, միթե  
դրանում ես մեղավոր եմ:

— Տանը մնա: Շալվարս ուզում եմ, վոր հար-  
թուկվի, գլուխս լվալ եմ ուզում և շատ ուրիշ բաներ:

— Յերեկոյան կլվանաս:

— Յերեկոյան թատրոն պիտի լնամ: Յավդ  
տանեմ, մնա: ցնցոտիների նման կախ հն ընկած  
շալվարիս ծալրերը, եղպես ինչպես լերեամ հասարա-  
կության առաջ:

Յերբ պետք եմ գալիս ցավդ տանեմ... իսկ յերբ  
վերհիշեց առավոտով հրացանի սլալթեցնելը.— ինչ  
անեմ, չեմ կարող ժողովից լիտ ընկնել, սառնասրտու-  
թյամբ պատասխանեց Գալանեն:

Գիդոնին նստեց տեղերում. կիսահանաք ու կի-  
սանկղացած տոնով հարցրեց:

Դու իմ ի՞նչն ես:

Գալանեն ուսերը վեր քաշեց:

— Ընկեր:

— Ի՞նչ ե նշանակում ընկեր. Բեքատուրին և Ար-  
թանան նույնպես իմ ընկերներն են: Ուրիշ վոչի՞նչ:

— Կինը, ամուսինը,— ժպտաց Գալանեն:

— Հեռո՞ւ:

— Ի՞նչ հեռու:

— Զահրումար.

— Քեզ:

Յերեկուն ել ահամա ծիծաղեցին:

— Ի՞նչ ես ծիծաղում—զոռաց Գիդոնին (մոռա-  
ցավ, վոր ինքն ել էր ծիծաղում): Ձե՞ վոր քեզ, իբրեկ  
կին, իբրեկ ամուսին եմ բերել ինձ մոտ. բիրի, վոր  
խնամես ու պահպանես ինձ:

— Ստոպ ընկեր. ամենից առաջ, ասա խնդրեմ, ի՞նչ ե նշանակում՝ Բեզ Վոր Բեռի. մեջքովդ բերիր, թե՛ ինչ։ Յանկացա և չեկա։ Յերկրորդ, հարգելի բարեկամ, ասենք թե՛ բերիր. բերել ես, վոր շարվարդ հարթուկե՞մ։

— Ապա նրա համար... անշնորհք կերպով քրքրջաց Գիդոնին, ինչքան կին ասես կարող եմ ճարել, քիչ կան։

— Անամոթ, զզվանքով մըթմըթաց Գայանեն և արհամարհանքով նախեց ամուսնուն։ Կնոջ հայացքը զգացնել տվեց Գիդոնին իր արարքի տգեղությունը, անտեղի վիրավորանքը և անմիտ խոսակցությունը. այս բանը խիստ վայրացրեց նրան։

— Վոչ մի տեղ չես գնա, պետք ե տանը մնաս։

— Լսի՛ր, հասկացիր, չե՞ վոր կոմչերիտական ես, միթե դուրեկան. կլինի քեզ համար, վոր ինձ մեռած հողի անվանի բլի՛ջը, պատիվների ցանկն անցկացնի։ Ի՞նչ պատճառով վոչ մի տեղ չեմ կարողանում գնալ։ Վոչ մի հանձնախումբ չի սկսիլ իր գործունեությունը, իր աշխատանքները, մինչև վոր յես նրանց հետ չլինեմ։ Իմ նախաձեռնությունը հիմք ենք դրել պատի թերթի։ Իմ ջանքերով ձեռք ենք բերել սեփական աղումը։ Յերկու ամբողջ շաբաթ վաղվղում ելի գործկոմից կենտկոմ, կենտկոմից գործկոմ, վոր տպարանի կողքին գտնված դատարկ դահլիճը մեզ հատկացնեն։ Մի մասը շրջկոմը, մի մասն ել մենք վորոշ գումար հատկացրինք և նորոգեցինք շենքը և աղումը՝ հարմարեցրինք։ Հարյուր տոկոսով աղումըն անդամագրել ենք բանվոր-չերիտասարդներին։ Ի՞նչ խմբակցություն ասես, ինչ սեկցիա ասես, վոր չկա մեր աղում-



բուժմ: Դեռ վոչինչ չեմ ասում աչն աշխատանքների նկատմամբ, վորոնց չես կատարում ելի մինչև տալարան դալս: Վճր մեկն ասեմ, վճր մեկը թվեմ:

— Պարծենալու համար այդքանն ել բավական ե:

— Վճչ, պարծենալու համար չեմ ասում: ճշմարտություններ ասողին պարծենկոտ չեն ասում:

Ասաց բոլորը, հանգստացա՛վ:

— Մինչև այժմ հարգանքով ու պատվով են հիշել միշտ իմ անունը, բջիջի նիստերում, իսկ այսօր իմ հասցեյին, Պլեսեյի դժգոհություններ. մինչև իսկ բյուրոյի մեջ չընտրեցին: Յերբ իմ թեկնածությունն առաջ քաշեցին, մեկը, չգիտեմ ո՞վ, բացականչեց, թե նա դեռ անկողնումն է աշխատում, ժամանակ չունի բջիջի աշխատանքների մասին մտածելու: Մնացած խոսքերը վերջացրեց արցունքներով:

— Մինչդեռ անծանոթ ե նրանց, վոր իմ մեջ համարձակու թյունն ու վորձառությունն առաջվանից ավելի գերադանց է այժմ առաջվա նման աշխատանքներն ինձ վոգեորում է ուրախացնում են, բայց... չերբեմն կասկածներ, յերբեմն ճաշ, շալվար և ալն, խանդարում են ինձ և աչնպես են շաղկապել ոջախի և ընտանիքիս հետ, վոր ծաղրի առարկա յիմ դարձել բոլորի առաջ:

Գայանեն ձայնը կակղացրեց:

Խոնչ անենք, միթե առաջին անգամն է, վոր Գայանեն կակղում է: Միթե առաջին անգամն է, վոր լսում է Գիգոնի առաջ բերած բանավոր փաստերը, վորոնք վաչախ նման արգելակներ են դառնում և խանդարում նրա վաղը: Գայանեն հազար անգամ է լսել մարդուց, իր ամուսնուց հետևյալ խոսքերը — թե՛

տղամարդուն վայել կյանք եմ ուզում, տսում ենք ու անվերջ կանչում, թե մենք բանվորներ ենք, չերկիր ենք շենցնում, իսկ շապկի վզնոցին մի մատի հաս-տության կեղտ ենք ման տծում, տասը դույր չունեմ վոր միանգամից լվանամ ու բանեցնեմ մի ամբողջ ամիս: Յեղած-չեղած մի շալվար ունեմ նա յե և տանը, և՛ դուրսը հագնելու շորս: Կոճակա կտրվեց, կարիր, ճխլտվել—ջարդվել եշորս հարթուկիր. ճաշ պատրաստիր ճաշարանում ճաշենք—ձեռքերով ծափ կտա և կսուլի, կարծես լծած ձիաներ քշելիս լինի. սակայն այսոր այս բոլորին նոր փաստեր ել ավելացան:

Գիդոնին ասաց.

— Բավական ե, վորքան աշխատեցիր հիմնարկության մեջ, այժմ դադարի ընտանիքովդ. վախենում եմ ձեռք տամ, հանկարծ պատասխանատվության տակ կընկնեմ. չտիպեցանց հոգնած ու ջարդված ամեն ուր վերաբառնում ես ակումբից, լղարել, չորացել—փե-տացել՝ կմախք ես դարձել, ժամանակ չունես ինձնով զբաղվելու, մինչդեռ յես կարոտ եմ փաղաքշանքիդ, յես սեր եմ ուզում, բոցավառ սեր. հո անասուն չեմ, մարդ եմ, զգացմունք ունեմ: Մի խոսքով ..

Ձեռքը թափ տվեց. ցույց տվեց, վոր իր ասած-ները ճշմարտութուններ են և վոչ մի ապացույցի կարիք չեն զգում:

— Կակղացրել ե ինձ,—անցավ Գայանեյի մըտքով: Մի քալ արավ առաջ.—գնում եմ:

— Այլևս յետ չդառնաս,—կանչեց յետևից Գիդոնին:

Գայանեն դուրս գնաց: Գիդոնը լսողութուն դարձավ, լսվում և հեռացող վոտերի ձայն, վերջում բոլորովին կտրվեց:

Գրիգորին դուռը բացեց, տեսավ՝ Գայանեն կանգնած եր պատշգամբում — մտքերի մեջ խորասուզված։ Նաչեցին իրար։

Գրիգորին ժպտաց և սպասում եր, վոր Գայանեն ել ժպտով կպատասխաներ իրեն, — ինչպես ա, ս պատահում եր ամեն նույնպիսի դեպք պատահած ժամանակ — անշուշտ լիտ կդառնա սենյակ և կհաշտվեն իրար հետ։

Ճիշտ վոր Գայանեն վերադարձավ տուն, բայց նրա դեմքին ժպիտ չերեկաց...



Հոսող գետը հանկարծ հորդանում և խիստ անձրևների հետեանքով, դուրս է գալիս ափերից և ծածկում ցամաք — քարքարոտ տարածությունը։ Ապա կամաց-կամաց սկսում և ջուրը պակասել։ Մինչև ցամաք քարքարոտ ափերը չերեան, մարդկայն սովորական աչքը հազիվ թե նշմարի ջրի պակասելը։ Յերբ բացվի յիրևա ցամաքը-քարքարոտ տարածությունը — աչն ժամանակ միայն տկնհայտ և դառնում, վոր ջուրն իրոք վոր իջել — պակասել և։ Սակայն վոր որվանից և ինչպես պակասեց, դժվար բացատրելի խնդիր և։

Հոսող գետի նման հանկարծակի հորդացած - շատացած, աշխատանքները մինչև չնորանան և ցամաք-քարքարոտ ճանապարհը չերեցնեն, Գայանեն անկարող և վորոշել, թե՛ վորքան են պակասել նրա դործերը, աշխատանքները։

Յերբ բլիջը նրա կատարած աշխատանքները դատվ անբավարար և շրջկոմի հրահանգչությունից ստացավ հետևյալ նկատողությունը, — «Հիմնարկ-ձեռ-

նարկության մեջ ընդամենը 36 կին աշխատող կար, վորից բջիջի նիստերին, մինչև ձեր գալը՝ մասնակցում եյին յոթը հոգի, ձեր գալուց հետո հաղիվ մի անդամով եւ ավելացել բջիջի կին անդամների թիվը, միթե այդ թուլլատրելի յեռ։— Այս նկատողությունից հետո միայն հասկացաւ Գայանին, վոր ինքն այնքան եւ ակտիւ չի չեղել, ավելի ճիշտ՝ կիսով չափ ակտիւ եւ չեղել եւ դրանից հետո սկսեց պատճառները վորոնել։

Մի ընդհանուր հայացք ձգեց ամուսնու հետ անցկացրած ամիսների ժամանակաշրջանի վրա եւ ամեն ինչ ալ սահմանում՝ գտաւ բնական եւ բավարար։ Նոր, մինչև այժմ այլ տղամարդկանց մոտ ձեռք բերած փորձառությունը, մանավանդ Գիդոնի հետ ապրած ժամանակ՝ զգաց եւ մեծ ուրախութեամբ լցվեց նրա սիրտը. ահա այս նոր յերևույթները հնարավորություն չեն տվել նրան նշմարելու այն մանր-մունր յերևույթները, վորոնց հմանին ականատես յիզաւ նա՝ տխոր առավոտյան։

Մի անգամ ամուսնուն հնազանդվեց եւ ժողովի չգնաց։

Մի ամիս հետո կրկնվեց յերկրորդը...

Յերկու շաբաթ հետո յերրորդը... եւ այսպէս անվերջ քանի գնում ժամանակամիջոցը կրճատվում եր, իսկ կես տարի անցնելուց հետո, ամուսնուն լսելն ու նրա կարգադրությունները կատարելը՝ դարձաւ նրա համար սովորական յերևույթ, սովորական կարգ։ Ձեռնարկած գործերից մեկն անհաջող անցաւ ստացաւ նկատողություն։

— Անպայման սառնասրտութեամբ եյի վերաբերվում։ Ընտանեկան փոխհարաբերության վերանայ-



ման տնհրաժեշտութեան կարիքը չզղացի: Յերկրորդ դործն ել անհաջող գնաց, — այս անգամ հանցանքը գցեց սեկցիայի — խմբակցութեան տնդամների վրա:

— Ձեն ուղում, ի՞նչ կարող եմ անել, — հայտարարեց քշիշի մասին:

Բշիշի տնդամների համար ընդհանրապես վոչ մի բան աչնքան ատելի չե, վորքան այն ակտիվիստը, վորն իր գլխին արդարացնելու համար իբր փաստ՝ մեջտեղ և բերում սեկցիայի խմբակցութեան վերաբերմունքը դեպի ծրագրված աշխատանքները: Դրա համար, ասում եյին նրանք, չիթե հոգնել ևս, կամ ձանձրացել աշխատանքներից, ասա պարզ ու խոստովանվի, իզուր, հանցանքը մի գցիր սրա՝ նրա վրա...

Ո՞վ, Գալանեն հոգնի՞, աշխատելուց ձանձրանա: Հազար անգամ վոչ, և այս ապացուցելու համար, դիմեց դանազան միջոցների: Յեռամսյա զործունելութեան ծրագիր մշակեց իր համար, կիրանի ուն տնդուսակցական կանանց ժողով հրավիրեց...

Յեվ միայն ոչս ատավոտ զգաց Գալանեն, վոր աչնտեղ, ուր աստջ կարկաչում եյին անդադրում աշխատանքի ադրյունները, այժմ զրանց տեղը բռնել և ոջախը — ընտանիքը իր մանր-մունր, առորչապահանջներով, վորոնք որեցոր սեղմում նեղացնում են հոսող ջրի հունը: Նրա տէրի աստջ ծառացան իր ընկերների մերթ գեղոհություններ, մերթ հեղնական ժպիտներ և մերթ նախանձ արտահայտող ծամածոված գեմքեր:

Ոջախ-ընտանիքն ու զավակի նկատմամբ ունեցած սպասելիքները վորոշ ուրախութուն ու խինդ բերին Գալանեյի դեմքին: Ձհտակացավ, գլխի չընկավ, թե ի՞նչ եյին ուղում իրենից այդ տարրերինակ գեմքերը:



— Թոթիաուրի,—ղիմեց ներս մտնողին Բեքաուրին:— Ռադիո կայանից յեկան 40 հոգի կարմիր բանակալիներ: Վերցրու քսան մարդ և կաշիները տարեք, դասավորեք պահեստում տեսակները չխառնեք իշար: Մյուսներին Մարոն և Վասկան գործի կղենն: Հին շենքը մաքրեցեք, աղբը թափեք Գուռ դեպը:

— Վասկայի հետ չիմ աշխատի,— բացականչեց Մարոն:

— Մախլաս, չես հավանում.— Վասկան իր ծաղկատար-չիչոտ դեմքը մոտեցրեց նրան:

— Բեքաուրի, քեզ եմ ասում.— Բեքաուրին չեռ դարձավ.— գլուխս տարել է, զահլեսխանում ե ու շարունակ կրկնում,— յեթե սովորական քաղցեմներին չես, թույլ տուր մի անգամ համբուրիմ: Ախտեղից ախտեղից ծիծաղի ձայներ լսվեցին:

— Դրա համար արժե՞ դեղեցնել ինձ վերահրակող հո չեմ դառնա գլխիդ,— դժկամակությամբ պատասխանեց Բեքաուրին:

— Հեռացրու ինձանից:

— Վահ, գիտե՞, ինչ ե, հեռացրու, մեջքիդ հո չեմ նստած, վոր հեռացնի.— ծիծաղեց Վասկան:

— Ե՛ր, դու, միքիչ հավաք պահիր քեզ, պոռաց Բեքաուրին և քալիերն ուղղեց դեպի դարբասի դուռը:

— Վժրտեղից են յեկել,— խոսեց ինքն իրեն՝ դարմացած: Բակը մտան 30-ից ավելի կանայք: Վասկան բոլորին ճանաչեց: Տպարանի բանվորուհիներ են,— խառնվեց նրանց մեջ, նայեց սրան-նրան և չերբ տեսավ, վոր յեկողների մեջ վոչ մի կոմիերիտական չկա

ինքնիրեն ասաց,—մախլաս, լավ է, վոր միայն անկուսակցական կանայք են յեկել:

Վասկան քաղքենի յեր անվանում բոլոր նրանց, վորոնք չեն մոտեցնում իրենց թշերը Նրա հաստ, զգայուն շրթունքներին:

— Բենքաուր, այ մարդ,—բարձր ձայնով կանչեց տպարանի բլիժի ազիտպրոպ Բերդիան.—անկուսակցական կանանց բոլորին հավաքեցի: Մեր՝ ես կըլարա Յետկինան՝ Գալանեն, կարգադրիլ է, վոր սրանք առավոտյան ժողովի գան, իսկ ինքը.—ականջին մի բան փսփսաց:

Յերևի շատ քաղցր է իր համար. չի բարեհաճել ժողովի գալ: Անմիջապես հիշեցի ձեր շարաթորյակը,—քանի վոր կանայք արդեն հավաքվել են. հո գիտեա, այ մարդ, անկուսակցականների բանը, կսկսեն խոսել.—կանչում են, հրավիրում ժողովի, իրենք չին գալիս և մեզ իղուր գործից գցում են, մտածեցի. տգիտացիա տանել սրանց մեջ. արի, և այժմ բոլորն յեկել են քեզ մոտ:

Բանվորները թող բաժանվեն ըստ բաժանմունքների:

— Զգուշ, ել հոսանքը բաց ե թողնված. զգուշացրեց թոթիաուրին դրսից յեկածներին, վորոնք ավելներին և թիակներին սպասելով՝ ման եյին գալիս բաժանմունքից-բաժանմունք և դիտում ամեն ինչ:

— Ինչ պատահեց Գայանեյին: Մի՞թե միանա խորժուլթյան վրայից սխաի անցնենք, վորպեսզի յիր-կրորդին հանդիպեմք: Խոսեց ինքն իրեն. մաղուլթի մեջ կեղտոտած ձեռքերը մաքրեց շորով. կեղտոտ շորը մի քանի վայրկյան ձեռքերի մեջ պահած՝ կանգնել եր շվարած ու գլխիկոր:



Տպարանի բլիշը, ուր աշխատում էր Գայանեն, համարվում էր շրջկոմի բոլոր արտադրական բլիշներին շարքում ամենաորինակելին: Ամեն տեսակի սեկցիաների աշխատանքները բավարար եյին. իր ժամանակին և բավարար չափով ժարվում էին կամպանիոն աշխատանքները և լիովին կիրառվում էին շրջաբերականները: Բլիշի քարտուղարը, վոլին ընկերները — մեծ զլուխ ունենալու պատճառով «Գոմբորա» մականուն էյին կըպցրել և շարունակ նրան տեսնելիս՝ կրկնում էին — մեջքիդ նստել ե ցուրտ Գոմբորի սարը — ամեն ուր լծված էր բազմազան աշխատանքի, վոշ վոջ նրան ալս կողմից վորևե նկատողության չէր կարող արժանացնել: Յերկու տարի շարունակ նա կրեց իր վրա բարեխիղճ աշխատողի կոչումը. չէր քանգամ իրար լստից քարտուղար էր ընտրվել: Սակայն 3 ամիս առաջ, մի աննշան անկետայի քննության ժամանակ, նրա վարկն ընկավ և ակներև դարձավ մեծ բաց նրա աշխատանքների մեջ:

Քննության էր առնվում մի ընկերոջ՝ կոմյերիտ-միւլթյան մեջ մտնելու համար ներկայացված անկետային թերթը:

Գոմբորան հակառակ արտահայտվեց:

— Ճշմարիտ է, ընկերը սխտեմատիկ և կանոնավոր կերպով հաճախում էր բլիշի նիստերին, սակայն, — Գոմբորան ձեռքը զարկեց սեղանին, — Սակայն սեղանն էլ ե մշտապես ներկա լինում բլիշի նիստերին միթե դրա համար կարելի չե բլիշի անդամ ընդունել: Շատերը համակարծիք չեղան Գոմբորային. մեկը



միայն փորձեց հակառակ կարծիք հայտնել, կողմնակից յեղով ընդունելուն:

— Բանվոր ե, մերժել չի կարելի: Բոլորը բացահանչություններով լռեցրին:

Գայանեն ձայն խնդրեց:

— Ընկերներ, բանվոր լինել և անհոգի սեղանին ման մասնակցել ժողովին, անշուշտ վոչ-վոքին չի կարող արդարացնել:

— Դեմ խոսողներ պետք չեն այլևս, արդեն բավական բան ասվել է,— բացահանչեց Բերդիան:

— Յեա դեմ չեմ խոսում, ուզում եմ պաշտպանել: Դուք շատ լավ գիտեք ընկերներ, թե վորքան սոմաշկոտ և մեկուսացած են լինում միքանի նոր ընդունված ընկերները: Դատական հանցավորժ մեղադրյալին ման նստած են անշարժ և լուռ լսում են մեզ: Նրանք միշտ այսպես կմնան, յեթե մենք ոգնության չհասնենք նրանց, և առաջ չքաշենք, գործի չլծենք: Մերժում եք ընկերովը. ինչո՞ւ համար, գիտե՞ք: Վո՛չ, չգիտեք: Անհրաժեշտ է, նախքան ընկերներին վորեւ մեկին մերժելը, առաջին հերթին ուսումնասիրել, մոտիկից ճանաչել, արժեքավորել նրան:

Ինքն անհարմար է դգում առաջին անգամ արտահայտվել, խառնվել և մասնակցություն ունենալ աշխատանքների մեջ, մանավանդ վոր չի առաջարկվում իրեն: Մենք ինքներս պիտի գործի քաշենք, խոսեցնենք, կապենք այս ու այն աշխատանքի հետ, պարտադրենք այս ու այն աշխատանքը կատարելու...

Դամբորան ընդհատեց նրա խոսքը:

— Անփորձ մարդուն աշխատանք չեմ կարող հանձնել, կփշացնի գործը և հանրության առաջ կվարկաբեկի բջիջի անունը:

Գլխի անհանգիստ շարժում արավ Գայանեն:

— Գոմբորա, լավ չես հասկանում, կամ ավելի ճիշտ՝ սխալ ես հասկանում բջիջի որինակելիութան բովանդակութունը...

Լուս սւշադրությամբ լսում էյին այս խոսակցությունը բջիջի մյուս անդամները, այդ անդամներից միքանիսը գլխի ընկան և հասկանալով խնդիրը՝ դարձապաժ հյին մնացել, թե ինչպիսի այնքան ճիշտ դիտողություններ արավ Գայանեն, իսկ իրանք բոլորովին չեյին հասկացել խնդրի այդ կողմը:

Գայանեն շարունակում և իր խոսքը:

— Գործը կփչացնեն, թող փչացնեն, մի անգամ յերկրորդ անգամ, բայց վերջի վերջո չե՞ վոր փորձառություն ձեռք կբերեն, ապա ուրիշ կերպ, յես չեմ հասկանում, ի՞նչպես կարելի յե տկտիվների նոր կադրեր սլատրաստել: Ի՞նչ ենք տեսնում մեր շուրջը— բջիջի ամբողջ աշխատանքները ծանրացած են միքանի հին տկտիվիստների և բյուրոյի անդամների վրա: Ամեն ինչ իրագործում ենք ժամանակին, որինակելի բջիջի անունն ենք վաստակիլ: Սակայն, թվում և ինձ վոր արժան չենք այդ անվանը և այդ վորակումը, վորովհետև քսանից յերեսուն մարդկանց տկտիվությունը խեղդելու գնով և ձեռք բերված այդ անունը: Ընկերներ. յերկու տարի յե անցել այդպես, այս յերկու տարվա ընթացքում կարողացե՞լ ենք արդյոք գեթ մի տկտիվիստ առաջ քաշել բջիջում: Վոչ: Գոմբորան ուրիշ բան չի վորոճում, բացի նրանից, վոր իր հաշվետու ղեկուցման մեջ պակասավոր և թուլ կողմեր չնկատվեն: Նորերը գալիս են, մտնում են բջիջի մեջ, ցանկանում են աշխատել: Գոմբորայի գործելակերպը,

նրա վարած քաղաքականութիւնը, նրա գործունեյութեան սխառեման յետ և վանում նրանց: Վորոշ ժամանակ նրանք զետեա կհանդուրժեն մեր բջիջի ալսմիշտութիւնը, սակայն վերջ իվերջո ստիպված կլինեն բոլորովին թողնել ու հեռանալ բջիջից, ինչի՞ նման և սա, սա ինչ գործունեյութեան տաքտիկա չե, իսկ Գոմբորան կանգնում և բարձր ձայնով հայտահարում և, թե՛ սեղանի նման ևն, աղտիվութիւն չէն հալտնաբերում բջիջային աշխատանքներում:

Համաձայնութեան բացական հոլութիւններով լցվեց սենյակը, բոլորը համամիտ էին Գալանեյի հետ:

Հրամանների վարժված Գոմբորան վառվում էր ներսից նա խիստ զալրացած էր, վոր Գալանեյն նման չէր ունեցաւ. Գալանեյի առողջ դատողութիւնները ոտիթ տվին Գոմբորային վրեժխնդիր լինելու նրանից մի հարմար առիթ. վ: Նետը լարեց: Քանի դեռ Գալանեյի աշխատանքները պատած էին ժրջանութեան ու բարեխղճութեան հաստ թիթեղով, Գոմբորայի լարած նետը հաջողութեամբ չէր ունենում, վրիպում էր, նպատակին չէր հասնում: Սակայն թիթեղը բարակեց և նետն իր գործը տեսաւ: Գոմբորան իր լետեից քաշեց, իրեն ընկերակից նաև Բերդիս. ինչ Յերբ նկատվեց, վոր Գալանեյն արդեն պատճառավոր և, սրանց թունավոր ու քինոտ խոսքերը գործադրութեան մեջ մասն Գալանեյի հասցեւին:

— Վրայիցդ արդեն յերևում է աղտիվութիւնը:

— Քաղքենիացել ես:

— Ինչիւ այդ չափ աղտիվորեն չես աշխատում նաև բջիջում:

Այդ խոսքերով դիմում էին Գալանեյին և ցուց

տալիս նրա ուռած փորը, հետն ել ավելանում եր իհարկե հեղնական բարձր ձայնի հոհոց: Յերբ այդպիսի ծաղրի ելին արժանացնում Գայանեյի պատճառավորութունը: Գայանեյին թվում եր, թե հազար մարդու առաջ մերկացնում, խալտառակում ելին իրան: Դանակի տակ ընկած հորթի նման՝ զարկում-բարախում եր անտանելի ու թունոտ վերավորանքներով լեցուն մալրական սիրտը:

Հաճախ զգում եր Գայանեն, վոր ինքն արդեն մայր ե, նա այդ վայրկյաններին՝ ակամա իկերը լայն բաց եր անում և դրկում մի ինչ-վոր բան՝ չերեկայելով, վոր իր չերեխան ե դրկում և այդ պահին ուրախ տրամադրութուն ելին արտահայտում ու խընդում նրա խոր ընկած աչքերը: Ցանկութուն եր ծագում նրա մեջ—վաղել, գտնել վորեւ մեկին, վորպես զի նրան ել ուրախակից անի իրեն, զգացնել տա իր չերջանկութունը, դիտակցել տա, վոր անհրաժեշտ ե թանգ գնով պաշտպանել ուռած փորն ամեն տեսակի անարգանքից, քանի վոր նրա մեջ բաբախում ե գալիք չերջանկութունը, կենսաբեր աղբյուրը՝ թանկագին կյանքը:

Նրա ամբողջ կյանքն ու գոգութունը-անվերջ ու անհամբիր զավակի սպասումների տակ՝ քնքշացել, նրբացել եր. պահանջում եր բոլորից հարգանքով վերաբերմունք:

Ոտարոտի եյին թվում ընկերներին անլեզու, լուռ ու մունջ՝ գիշերային անլուր տանջանքներով լեցուն մալրական աղոթքները, չե վոր սկզբներում այդպիսի չեր Գայանեն: Ինչհառ ուրիշներն ել այդպիսի չեն լինում, հարց եյին տալիս ընկերները՝ մեկը մյուսին:



Յեւ Քաջանեյի համեմատութիւնը շրջապատի սովորական կանոնաց հետ, ընկերներին վերջ իվերջո բերում եր այն համոզման, վոր Քաջանեյի արդի վիճակը բնական չէ, ուրեմն և սկսում են ծաղրել ու ծիծաղել վրան:

Այս անարգանքը, սոսկալի պատճառով կրճում եր նրա սիրտը:

— Վոչինչ, այս բոլորից հետո չե՞ վոր մալը եմ լինելու — ինքն իրեն սիրտ եր տալիս Քաջանեն և գալիք յերջանելության հուլիսը եր ներշնչում իրեն:

Ընկերներից մեկն առանց քաշվելու, անամոթաբար, ուրիշների ներկայութեամբ մի որ հոխորտաց:

— Ա՛յ անիրավի կին, եղ վորդ չես ել կարող ելի ուսցնել, ել ինչո՞ւ ելիր ինձանից փախչում: — Ամուսնանալուց հետո Քաջանեն շարունակ խուսափում եր ընկերներին պատահելուց և կեղծ անցադիր ունեցողի նման չեր սիրում յերկար, միևնույն բնակարանում ապրել:

Այս գեղքը պատահեց աշխատանքներ ավարտելու ժամին:

Նախաճաշում ելին:

Քաջանեն նստած եր սեղանի ծալրին և առանց վորեւ տխրածակի ծամում եր հացի մի կտոր: Միքիչ հեռու կանգնած եր Քոմբորան և ինչ վոր թուղթ ստիպմամբ տալիս եր Վասիլային, Վասիկան այդ գրութիւնը չէր ուզում վերցնել և շարունակ նստում եր Քաջանեյին:

— Քարճյալ մի նոր բան են հորինում իմ մասին, ինչպէս չերևում է, — մամաաց ինքնիրեն Քաջանեն: Նրա սիրտն սկսեց արագ բարախել:

Վասկան գրութունը դրեց նրա առաջ:  
Գայանեն հարցրեց.

— Ի՞նչ թուղթ ե այս:

Վասկան պատասխանի փոխարեն ժպտաց և այդ ժպիտն ոձի նման խայթեց Գայանեյի սիրտը, սփռթնեց, դեղնեց այդ վայրկենին նրա դեմքն ամբողջովին սոսկում եր արտահայտում: Նայեց թղթին:

Նկարված եր.

Մերկ չերեխայի մարմին. նրա շուրջը չերևում էին միջանի ձեռքեր, վորոնք այս ու այն կողմից հարձակվել էին չերեխայի վրա և ձեռքերը պինդ բռնած՝ քաշում էին չերեխայի մարմնի այս ու այն մասից՝ վրմանք ձեռքից, վրմանք վրտից, վրմանք ել մարմնի մի այլ մասից: Նկարի գլխին գրված եր. — Գայանեյի նորածին յերեխան իսկ տակը գրված էին միջանի ընկերների անուններ, վորոնց հետ յերեխանի ապրել էր Գայանեն: Այս բոլորն արձանագրված եր խոշոր տառերով և կողքին մակագրված՝ «Ովեք յերեխայի ոսեղծագործմանը մասնակցութուն ունեցան»:

Գայանեյի շրթունքներն սկսեցին դողալ, ջղայնութունից սկսեց կրծոտել իր շրթունքները: Առաջին անգամ եր, վոր Գայանեն թափում եր ալի-աղի արցունքներ:

Բոլորից և ամեն ժամանակ տպագա մայրը խընդում եր, վոր հարգանքով և պատվով վերաբերմունք ունենան դեպի իր ուռած փորը, չհայհոյեն այն նվիրական ու անմենասուրբ բնուր, վոր կրում եր իր մեջ, վորը տարբերվում եր այլ ամեն տեսակի բնուրից նրանով, վոր սա անլեզու-լուռ ու մունջ կենդանութուն, — չերջանկութուն եր պարզեում ու սնուցանում Գայանեյին:

Վոչ վոք չի հասկանում Գալանեյի այս բաղ-  
ձանքը, այս բարձր հոգեկան ապրումները. նրան չեկին  
ուրախացնում փողոցներում անխնայորեն փոված ա-  
րևի ջերմ ճառագայթներն ու ալստեղ-այնտեղ փար-  
թամորեն բողբոջած ծառերի ճյուղերը: Նրան չեյին  
ուրախացնում վոչ բաղմազան կառքերի ու ավտոմո-  
բիլների գոռգոռոցն ու աղմուկը փողոցների և վոչ ել  
ժամը 12-ի մոտենալը, յերբ տպարան եր գալիս գըն-  
դապետի տնուսին Ադաֆի Իլարիոնոֆնան և իր հետ  
եր բերում բուլկիններով, թխվածքներով և տաք գտ-  
թաններով լեցուն մի կողով:

Նախաճաշի համը կորավ:

Ի՞նչն և զարմանալին:

Առանց այն ել ընկերներն ընդհանրապես սովո-  
րություն ունին մարմնական արատ ունեցող ընկեր-  
ներին ծաղրելու. ալժմ ել Գալանեն և իր այս վիճակով  
զարձեկ նրանց ծաղրի առարկան: Անբնական ե թվում  
նրանց, վոր Գալանեն, մեր Գալանեն, նա, վոր մեր  
ըջիջի ամենաակալիվ անդամներից եր համարվում՝ ա-  
զատ մտածող ու խելացին, այնքան ճարպիկ ու աշ-  
խուժ աղջիկը կմտնեիր գիդեցիկ վարագույրներով ծածկ-  
ված պատուհանների յետեը և կզբաղվեր ինչ վոր ո-  
ջախի ու զավակի ստեղծագործական աշխատանքով:

Նրանք տեսել են մանր-բուրժուական ազդեցու-  
թյան տակ գտնված մի ընկերոջ, վորը հինգ սեփա-  
կան և վեց մերկ աղջիկներ եր կախել եր սենյակի  
պատից:

Նրանք տեսել են արբեցողությամբ տարված կոմ-  
յերիտականին, վորը սովորական քաղաքացիներին  
առանց վորևի վիրավորանքի և աղջիկներին առանց

կմշտելու՝ թույլ չե՛ր տա լերբեք փողոցով անցնելու։ Սակայն սրանք բոլորը հասակի մարդիկ էլիսն։ Մինչդեռ Գայանեն յիշել եր հին, փորձված կոմյերիտականներից նրանից ավելի յեր պահանջվում։ Նրանք նայում էլին իրենց շուրջը և չեյին տեսնում իրենց սեկցիայում—իմբալիցուիլան մեջ վորեն մեկին, վոր ընդունակ լիներ կամ արած լինե՛ր այն բոլորը, ինչ-վոր թույլ եր ավել իրեն Գայանեն։

Ահա ձեզ՝ թշերը կարմրած ու չաղլիկ Մարոն։

Ահա ձեզ՝ ալրի և ծխախոտ ծխելուց ձայնը հաստացրած Պելոն։

Ձեզ ուրինակ՝ Թալիկոն, Թամրիկոն, Մալիկոն, Գոմբորան և ընկերները ճիշտ են ասում Գայանեյի մասին, վորովհետև նրանք շատ լավ գիտին, վոր Թալիկո-Թամրիկո և Մալիկոների համար միութենական աշխատանքներն ամեն բանից բարձր են և աշխատանքները որվա հրամայական պահանջ են նրանց համար։

— Ի՞նչ ոքիվատելության ժամանակ եր (Գոմբորան, պատճառավոր լինելը—փորն ուռցնելը համարում եր ոքիվատելութուն), դեռ կռիվը չի վերջացել։ Ասում եր Գոմբորան և սկսում թվել այն ամբություններն ու արգելքները, վորոնք խոչընդոտ էլին հանդիսանում ու խանգարում համաշխարհային հեղափոխության բռնկումը։

— Յուրաքանչյուր վայրկյան, բովանդակ կանքը պետք է նվիրել հեղափոխության հաջողություններին, նրա կարմիր որերին։— Այսպես եր հասկանում խնդիրը Գոմբորան աչապես եյին հասկանում նաև Թալիկո-Թամրիկո—Մալիկոները և վերջինները պաշապանում



ու արդարացնում էյին Գոմբորային: Գիշեր ու ցերեկ անդադրում աշխատում էյին նրանք: Ստորին կովում ու պայքարում էյին ալ: յերեսութենի դեմ, վորոնք կարող էյին վարեա կերպ խանդարիչ հանդամանք հանդիսանալ նրանց գործունեության թափը թուլացնելու մեղմելու գործին:

Այսպես եր հասկանում Գայանեն, այսպես եր հասկանում նաև Թոթիատուրին:

Մինչդեռ այսոր արդեն նկատել էյին մի նոր խոց այս ընդհանուր վերքի վրա և այդ խոցը պետք եր պակել, պետք եր վնչնչացնել, վորպեսզի նա չմեծանար և չվարակեր ուրիշներին եւ: Այսպես եր մտածում Գոմբորան և զգվարանում եր հանգիստ աչքերով նայել յերեկվա անփոխան, անառակության ճամբին կանգնած մօրը, առաջին մօրը, վորը գուցե առաջին անգամ մի վատ որինակ պիտի դառնար իրենց բջիջում և իրրի վկա-ապացոյց՝ ապաւա հազարավոր մայրերի:

Գոմբորան խիստ խոսքերով դատափետեց, գունավորեց Գայանեյի տարաքը, վորպեսզի ավելի համոզիչ գործներ ընկերների համար իր տեսակետները:

— Ահա թե ինչ և նշանակում հեռանալ, չեա մնալ մասսայական աշխատանքից, պոկվել կտրվել բջիջային ժողովներից, — հայտարարեց նա բլուրոյի նկատում: — Յերկու տարի յե արդեն, վոր նա աշխատում եր մեր բջիջում և յերբեք չեմ հիշում, վորեւ պախարակելի խոսք ասեր մեր բջիջի աշխատանքների մասին, շարունակ գովարանում եր մեր գործունեությունը և ինքն ել ակտիվ մասնակցութիւն ուներ նրա աշխատանքներին, սակայն յիր բջիջային ամեն-

որչա աշխատանքներից հեռացավ և յերեք ամիսը մի անգամ հազիվ եր ըարհհաճում նիստերին մասնակից լինել, այդ որվանից սկսեց խոսել մեր քջիջի անգու- ծունդության մասին, մեր սխալների մասին, սկսեց խելք սուրբցնել մեզ և ուղիներ ցույց տալ պործու- նեյության սխտեմը պիտի փոխել, ասում էր Գայա- նեն—ընկերներ, ի՞նչ և նշանակում այս, վոչ տլ ինչ, յեթե վոչ՝ բերդիոնխտություն, վորի դեմ խստորեն կռվում եր մեր հեղափոխության հերոս—վետերան ընկ. Լենինը:

— Յես ասում եմ, վոր հոր ակտիվ ուժերի առաջ- քաջման խնդրը նրանից պակաս մենք չհնք հասկանում, մենք ել ենք գիտակցում այդ և գուցե ավելի, սակայն բանը նրանումն է, վոր աշխատանքից ձանձրացել է, ծուլացել, կերպարանափոխվել է ամեն ինչ ուզում է ձգել ուրիշների վրա—ուրիշներին մեղադրել—վոր- պեսդի ինքն արդար դուրս գա:

Միթե այս չեք հասկանում բոլորդ:

Այս տեսակետին միանում ելին նորանոր կար- ծիքներ, ուռցնում—մեծացնում ելին խնդիրը, սնու- ցանում նորանոր շինծու փաստերով և վերջում այս աշխատանքն իր դրական արդյունքն ել տվեց:

\* \*

Յերբ Գայանեն իմացավ, վոր մտադրություն ունիմ Դրա տիպը գեղարվեստորեն պատկերացնելու մի պատ- մվածքի մեջ՝ իր ձեռագիրը հանձնեց ինձ այդ ձեռա- գիրը զետեղեցի պատմվածքիս համապատասխան տե- ղում. ինչպէս եք կարծում. կոզովի պատմվածքը, թե՛ վոչ:

Բանֆակցու նկատողություն

Յերիտասարդները որագիրներ են գրում, իսկ ծերունիները—հասակավորները հիշողություններ: Ա-

ռաջինները՝ անգործութեան պատճառով, իսկ լերկ-  
րորդները նրա համար, վոր նրանց ստեղծագործու-  
թեան ժամանակն անցել է. կյանքը—շրջապատի լե-  
սուն կյանքը նրանց համար դարձել է անցյալ և դերը  
կատարած—վերջացրած դերասանի նման, մտնում են  
փոշոտած կուլիսների յետևը և սառնասրտութեամբ  
վերցնում են իրենց կեղծամն ու միւրուքը, մաքրում  
դիմքին քսած բազմազան ներկերը և վողջ խեղու-  
թեամբ կանգնում հասարակութեան առաջ: Նրանց չի  
վախեցնում այս մերկութունը, յեթե անգամ բերա-  
նարաց անմիտ հասարակութունն սկսի վատաբանել  
նրանց այս գովելի կյանքը:

Մերունիները—հասակավորների համար հուշե-  
րը—անցյալի հիշատակութուններն իրենց աչքերից  
ու ձեռքերից փախչող կյանքի վերջին փայլատակում-  
ներն են, վերջին հողհարքի ժպիտները:

Որագիրներ գրողն այնպես թե այնպես վորոշ  
հույսեր ունի վոր իր գրվածքները կնկնեն մեկ ու  
մեկի ձեռքը և կկարդացվի, ուստի նրանք այնքան ել  
հուսահատ չեն և հաճախ անդիտակցաբար, ինչ-վոր  
մարդկանց առաջ փորձում են արդարանալ իրենց գո-  
յութեամբ ու գրվածքներով:

Իմ գրած տողերը վոչ հիշողութուններ են և վոչ  
ել որագիր:

Անձրեւում եր:

Պատուհանից նայում եյի դիմացիս լերկհարկանի  
տան կտրին, վորտեղից անձրևի ջրատար խողովակը  
ձաքել, փչացել եր և ջուրն ահագին աղմուկով թափ-  
վում եր զեմին, գուրեք գոյացնելով այնտեղ:

Նայում եյի անցնող-դարձողներին, վորոնք ո-

ձիքները բարձրացրած շտապում ելին արագ քալել-  
բով: Ճաքած—փչացած խողովակի առաջ մի վայրկյան  
կանգ ելին առնում, կողքով թռնում՝ ջրի տակ չըն-  
կնելու համար:

Յեթե նրանք իմանային, թե ինչպիսի ծիծաղելի  
տեսք ելին ընդունում ճաքած խողովակի տակ անձրե-  
վաջրից խուսափելիս, անշուշտ նրանք կգերադասելին  
առանց ցատկելու անցնել խողովակի տակով: Յերբ մի  
փոքր հեռանում ելի պատուհանից խողովակից թափ-  
վող ջուրն այլևս չեր յերևում և ստանում ելի այնպի-  
սի տպավորութուն, վոր կարծես թե անցորդներն ա-  
ռանց վորևե պատճառի ցատկում ելին անտեղի: Յեր-  
կու, թե յերեք անգամ փայլատակեց յերկինքը և ցու-  
ցահանեց մթին ու անձրևոտ գլշերային պատկեր:

Յես շարունակում ելի հանգիստ նայել տեղացող  
անձրևին ու անցորդներին:

Անձրևը դադարեց:

Հսվում եր այժմ միայն Համբարձման փողոցի  
ցերկու կողքերից առուններով հոսող ջրի քչքչոցը, վո-  
րոնք սահում ելին վերից ներքև և շուտով անհետա-  
նում ելին կիսաճամբին:

Պատուհանից ցած թռա և սկսեցի սենյակումս  
անց ու դարձ անել:

Մենյակիս պատերը խիստ սպիտակ ելին. չեյի  
սիրում այդ գույնը. նրանք միշտ ցրտութուն են ըղ-  
գացնել տալիս ինձ: Բացի գիրքս և սկսեցի կարդալ.  
սակայն նույն վայրկենին դգացի, վոր ինքս ինձ խա-  
բում եմ: Սիրտս անհանգիստ եր, ինչ-վոր բան խա-  
գարում եր ինձ կենտրոնացնել մտքերս. ուզում ելի  
մի կնրպ ազատվել այդ շփոթ վիճակից, չեյի կարողա-



նում: Զգում եյի, վոր շատ շուտ պիտի սկսեմ գոռալ, գուցե և լաց լինել. սակայն, վորպեսզի մոռացութիւն տամ հուզող մտքերս՝ սկսեցի գրել. Ինքս ինձ հետ սկսեցի գրուցել, աշխատում եյի վերհիշել շփոթմունքիս և հուզմունքիս պատճառները, և լերակայեցիք, գրությունս ավելի վատանալու փոխարեն, ինչպես մինչև այժմ կարծում եյի, կամաց-կամաց հանդստանում եյի և հաշտվում գրության հետ:

Զգարմանք, լես, վոր լերեք չեյի կարող հանգուրժել վորեւ մեկի հրամանների ու կարգադրութիւնների կամակատար լինել, ինչպես տան պահպան շունը. մոտեցող գողին, մինչ այսոր ել դեռ չեմ պնայել նվիրական ծառի տակ և չեմ ջնջել ազդանվանս կողքին մակազրկած Գիդոնի աղգանունը:

Յես մտածում եյի և կարծում, վոր փախչելը նըշանակում և պարտութիւն:

Ո՞վ կարող ե ինձ լերաշխովորել, վոր լերկրորդ ամուսինս նույնը չի լինելու, ինչ վոր առաջինը, և լերկրորդը չի լինելու առաջինի կրկնութիւնը:

Գիդոնները դժբախտաբար շատանում են այն բանակում, վորի ընդհանուր անունը կոմյերիամիութիւն և:

Յես, ասե՛ք թե փախտ, հեռացաւ Ապա լերկրորդը՞, նա լել փախչի իսկ յերբորդը, կարճ և համարեցնել իր փախուստը. ասե՛ք թե հարմարեցրեց, գրանից թնչ ոգուտ, թնչ դուրս կգա այդ բոլորից: Գիդոններն այս ու այն կողմ վազվզելով չեն փոխվի. ընդհակառակը, ավելի կխորացնեն ու կամբապնդեն քաղքենիական ոջախի սահմանադրութիւնը — կոնստիտուցիան:

Գիդոնին իր մոտիկությունն ինձ հետ՝ սեր—սիրահարությունն և համարում։ Սերը—սիրահարությունն ալնալիսի մի պատգամ և, վոր տառնց վորեւն պալմանի վերցրած՝ վոչինչ չի նշանակում։ Յես գիտեմ և լավ հասկանում եմ, վոր նա ուղում և ինձ հետ ապրելիմ լալին և ցանկանում, սակայն այս ցանկություններն ալնալիսի տոնով ու ալնալիսի գործողություններով և պատկերացնում, վոր յես ինչ-վոր յերկսայական, առաջատ կացության մեջ եմ ընկնում։

Գիդոնին շաբաթորյակից վերադարձավ. սկսեց հրացանը մաքրել. լսվում և փալասի շփշփոցը և ձիւղանի պոչի չխչխկոցը։

Դիմում եմ նրան.

— Կգամ թատրոն, մանավանդ վոր այս տարի բոլորովին չեմ յեղել։

Գիդոնին սիրալիւ պատասխանում և, թե ավելի լավ և տանը մնալ, քանի վոր նրա համար անհարմար և պատճառավոր կնոջ հետ միասին յերևալ թատրոնում—թատրոնական հասարակության առաջ։

Առանձին ման կգամ, քեզ հետ չեմ լինի։

Պատասխանելու վոխարեն Գիդոնին արագացրեց հրացանի մաքրումը։ Մի ամբողջ ժամ ծանր կառարի նման մնաց անշարժ ու ընկած եր խորը մտածմունքների մեջ։

Միթե պարզ չե արդեն, թե վորքան ձանձրալի չենք դարձել իրար համար. յեթե յես վորեւն ձեռով պատճառ չդառնամ և առիթ չտամ նրան խոսելու, ամբողջ որը կանցկացնի լուռ և վնչ մի բառ չես լսի նրա բերանից։

Առաջներում շատ չելի դարձանում նման յերե-

վուլթներէ հանդեպ. պարզ ու հստակ դիտակցութիւն  
 եւ չունելի մերք վորեն միտք ծագում եր իմ մեջ և  
 կարիք կի դպում մտքերս փոխանակելու մեկ ուրիշի  
 հետ, Գիդոնին չեթե չցանկանար մտքերի փոխանա-  
 կութիւն ունենալ ինձ հետ, կերթայի Թոթիաբուրու  
 կամ մի ուրիշի մոտ: Իսկ անժամ Ինչքան խրվում, խը-  
 ճընվում ու թափանցում ես ոջախի պալմաններէ մեջ,  
 այնքան աստիճանաբար և որեցոր ծառանում են քո  
 առաջ նորանոր, անծանոթ, մինչև այժմ դեռես չե-  
 ցած և գոյութիւն չունեցող խնդիրներ ու յերեուցթ-  
 ներ: Հաճախ այս յերեուցթն աչնալիս ինտիմ ընուլթ  
 ունի, վոր դուրս տանել, ուրիշներին հաղորդակից ա-  
 նել չես կարող, ինչպես փոփոցում սիքսուալ ախտի  
 կատարումը: Յերկու անձնավորութեան և միայն վե-  
 րաբերում այդ յերեուցթը. լավ և թե վատ, այդ այլ  
 խնդիր է, բայց քանի վոր հրապարակ և չեկել, միայն  
 այդ յերկու անձնավորութեանները պիտի պատասխա-  
 նը տան—խնդիրը վճռեն: Այսպիսի դեպքերում չես  
 զգում եյի, վոր Գիդոնին չի ցանկանում հանձն առ-  
 նել յերկրորդ անձնավորութեան պատասխանատու-  
 թիւնը: Փախուստ և տալիս: Վոչ մի խնդիր քննու-  
 թեան չի առնվում մեր ոջախում, մեր ընտանիքում:  
 Պատահանների ազակիներին լրագրեր եյին փակցրած  
 մի անդամ ասացի արդոք լավ չէր լինի, վոր պատու-  
 հաններին վարագույր անցկացնենք:

Գիդոնին պատասխանեց.

— Իսկ փոքր:

— Այլ ծախսերի նկատմամբ միքիչ խնայող կը-  
 լինենք և մի կերպ կ'առնենք, որինակ՝ դու պակա-  
 սեցրու հրացանիդ գնդակների գնումը, իսկ չես նա-  
 խաճաշիլը տնից կտանեմ:

Գոռաց Գրիգորին, — Վարագուլըների խնդիր դնելը մեղչանականությունն է. հարշիաներով և զանազան զիզիպիզիներով զարդարված վարագուլները միայն քաղքենիության փառքորդներն են:

Ինչո՞ւ չե՞ք քաղքենիություն: Ինչո՞ւ անպատճառ հարշիաներով ու զիզիպիզիներով և վոչ թե մի հասարակ վարագուլը, — հարցնում եմ նրան: — Ինձ ամենևին չի հետաքրքրում նման մանր-մունր խնդիրներով ըզբաղվելը, — պատասխանում էր նա:

Պատահմամբ այս մասին խոսակցություն ունեցա նաև Թալիկոյի հետ: Ծիծաղեց:

— Քաղքենիական խնդիրների մասին վոր չխոսենք իրար հետ, ուրիշ հարցեր չաւնե՞նք, ի՞նչ է, — պատասխանեց Թալիկոն:

Յես լսեցի, վոչինչ չպատասխանեցի:

Հներում յերեխաներին վախեցնում ելին զանազան տեսակի քաջքերով ու սատանաներով: Յուրաքանչյուր յերեխա վորոշ պատկերացում ունէր քաջքերի ու սատանաների մասին, սակայն բոլորի համար այդ քաջքերն ու սատանաները հավասարաչափ սարսափելի ելին. վիթխարի հրեշներ, սոսկում առաջ բերող ելակներ: Յեւ ամեն անգամ յերեխաներին սատանելու համար բավական էր նրանց անունը տալ, արդեն հնազանդվում ելին: Իմ նկատմամբ քաջքերի և սատանաների դերը խաղում էր մեղչանականությունը: Բավական էր, վոր լեզուդ շարժես, բերանդ բաց աւնես, վերջացավ, իսկույն կսկսեն հազար ու մի մեջբերումներով (ցիտատներով) ապացուցել քո մեղչանականությունը, թեև նրանց առաջ բերած վաստերն ու ապացույցները վոչ մի կապ չունեկին իմ դրած խընդրի հետ:



Լսում ելի յեա և որեցոր դգում, վոր յերկրորդ մարդու պատասխանատվութիւնն ամենին անհրաժեշտ չեր: Կարծես տարբեր տեղերից իրար հետ հեռախոսով զրուցելիս լինելինք, այնպես կցկտուր և ընդհատումներով եր լինում մեր խոսակցութիւնը:

Գիղոնուն նեղում եր ոջախը, ընտանիքն այնպէս, ինչպէս ազատ թռիչքին սովոր թռչունին վանդակը, վորը յուրահատուկ կադապարի մեջ և դնում և յուրահատուկ ցանցի մեջ առնում նրա ազատութիւնը: Գիղոնին դգում եր, վոր այդ ցանկապատը նրա վրա ինչ-վոր պարտավորութիւններ և դնում: Զգում ու գիտակցում եր, քանի վոր նրա սենյակին ալեւացել եր մի նոր մարդ. նա այս նոր մարդու ոգտին պիտի դոհարերեմ մի Իմչ-վոր քան. այդ մի ինչ-վոր բանը նրան թվում եր մեղչանական-քաղքենիական հասկացողութիւն: Պննութիւն առնել այդ խնդիրը, միջիչ մատծել այդ մասին՝ խուսափում եր: Գլխի չեր ընկնում, վոր այդ «մի ինչ-վոր բանը» մատծել և տալիս ինձ հետ պառկելուց բացի, վորոնել մի այլ հիմք ինձ հետ ընկերակցելու: Ձեր կարողանում նշմարել, վոր մեր ոջախի փոխարեն, իրար մեջ՝ մեր մեջ փոխադարձ անհարմար ու անմիտ գործառնութիւնների շնորհիվ ստեղծված եր կոճկված, դռով սոսինձած փոխաբարերութիւն:

Այլ կերպ ել չեր կարող լինել: Մենք առաջիններն ենք, առաջապահներ, դեռ վոչ վոք չեր անցել այս սենյակով, վորպեսզի մենք որինակ վերցնելինք նրա թողած սովորույթներից, փորձից:

Կյանքը սովորեցրել եր Գիղոնին հրացանը ձեռքին վազվել փողոցներում. նա լավ գիտեր. թե ինչ-

պես պիտի կանգնե՞ր դազգլահի մօտ, ինչպես պիտի աշխատե՞ր, սակայն չգիտե՞ր, թե ինչպես պիտի սենյակում ման գալ:

Գիդոնին ոջախի մեջ առաջինն երևում էր, ծանր երթվում նրան, վորովհետև առաջիններեց եր: Ման գալու փոխարեն, վորտքերը բխոված ձիու նման թռչկոտում—ցատկում եր: Այդ ցատկումների ժամանակ աքացիները դիպչում ելին ինձ, զուցե այսուհետ ել դիպչեն: Կհամբերեմ, կդիմանամ այդ բոլորին: Յես հասկանում եմ, վոր այդ աքացին, հանձին Գիդոնի՝ հին աշխարհն ե հարվածում ինձ: Մեզ զարկել են բարրիկադների վրա, յերբեմն պարտվել ենք, սակայն չենք թողել կովի դաշտը: Վոչ ել այսուր կփախչեմ. կպայքարեմ և ամուսնուն կխլեմ հին աղաթների, սովորութիւնների ճանկերեց, վորոնք վորպես դարակի վրա լերկարատե նստած փոշի, այնպես խիտ նստել են ու ծածկել:

Բջիջում որակարգի խնդիր կդարձնեմ, ընկերներին կխոսեցնեմ, կողտադործեմ Թոթիաուրուն: Նրանք պետք ե խառնվեն այս գործի մեջ, պիտի հարթել տան ճանապարհը, վորպեսզի հետագա լեկողներն անցավ վորտք դնեն այդ ասպարիզում: Իմ ուժն ավելացնում, կրկնապատկում եր ապագա զավակս: Ինձ այնպես եր թվում, վոր մեր այսուրվա ոջախի բացը պիտի լեցնե՞ր մեր ապագա զավակը: Յես պարզ չեյի գիտակցում, թե ինչպես պիտի այդ կատարվեր, սակայն բնազդորեն զգում եյի, վոր այդ այդպես պետք ե լինե՞ր,— զավակը խոշոր դեր պիտի խաղար մեր ընտանիքի, մեր ոջախի կազմակերպման և կարգավորման գործում:

Սովորականի նման նայում էլին ակումբի պատկերներով զարդարված պատերը, սովորականի նման վազում եր ակումբի դահլիճում անկանոն կերպով ալստիզ-ալնտիզ թափած նստարանների միջև տիկնիկական քարտուղարը։ Մի ձեռքում լռնած ուներ ռատյանն ու թղթերը, իսկ մյուս ձեռքով մերթ ալս նըստարանն եր ուղղում, մերթ այն, վորպեսզի նրանց միջով կարողանար անցնել։ Սովորականի նման շտապեցնում էլին ընկերները Գոմբուրային, վորպեսզի բջիջի ժողովը շուտ բանար։ Սովորական ծիծաղ, հանաքներ, իսկ ինչո՞ւ սիրտս ավելի արագ սկսեց բաբախել, յերբ բացի ակումբի դուռը։

Առանց հաշիվ տալու ցնցվեցի։

Ուսերիս դեպծ դլխիս լայն ծածկոցը վերցրի և դեմքս ծածկեցի։ Վախեցա հեղնող-ծաղրող աչքերից։

Նիստը բացվեց։ Վերջին շուկները լռեցին և քարտուղարը կարգաց որակարգը։

Որակարգի լերրորդ հարցը միջանի ընկերների կուսակցության մեջ անցնելու անկետանների քննության խնդիրն եր։ Իմ անկետան ել անշուշտ այսոր պիտի քննության առնվի, մտածեցի յես։ Սրտիս զարկը սկսեց արագանալ, նրա ամեն մի զարկոցը պարզ ու հստակ լսելի էլին լինում ինձ։

Ով ապրել ու դգացել և այսպիսի վայրկյան և ում սիրտը բաբախել և ալսպիսի գիտակցությամբ, նա առանց վարեն մի համողիչ խոսքերի կհասկանա, վոր ժողովում կարգացված չերկու դեկուցումներից վնչ մի բառ չի հասել իմ ականջներին—վոչինչ չեմ հասկացել։ Պապանձված նստած եյի և սպասում եյի անկետանների քննության սկսվելուն։

Հոգնածութիւնն եյի դգում: Զարմանալի լե. նրա-  
տած ելի, չեյի աշխատում, չեյի մտածում, բայց ըզ-  
գում ելի խիստ լարվածութիւնն, կարծես արագավազ  
գետի մի ափից մյուս ափն եյի անցնում և աշխատում  
եյի արագ սլացող ակիքների ձեռքից խլել իմ վռտնե-  
րը, դիմադրում ելի, վերպեսզի շուտ կարողանամ մյուս  
ափը հասնել:

Խիտ անտառի նման, հանկարծ ողի մեջ ճոճվե-  
ցին անթիվ ձեռքեր և կարծես այդ անտառի վրայով  
սահեց հով քամին՝ ծավալվեց փափսոց, — ընդունենք,  
արժանի յե:

Քննվում եր Թալիկոյի անկետան. բջիջը վորո-  
շեց ընդունել նրան կուսակցութեան մեջ:

Յերբ նայեցի Թալիկոյի ուրախութիւնից փայ-  
լատակող աչքերին, մտածեցի՝ յերանի յես ել ալապես  
կուրախանամ կուսակցութեան մեջ անցնելիս: Ամբողջ  
մարմնովս անցնող հանգստացուցիչ դողը համոզեց ինձ,  
վոր վոչ միայն կուրախանամ, այլ դա ամենաբարձր,  
ամենամեծ պատիվը կլինի ինձ համար: Հետո...

Հետո չել, տեղի ունեցավ մի շատ սովորական յե-  
րևութ:

Ինձ վախեցրեց այն գերեզմանային լուութիւնը,  
վոր տիրեց բջիջում իմ անկետային թերթն ընթերցե-  
լուց հետո: Այսպիսի ժամանակ բջիջը սովորաբար աղ-  
մկում. կենդանութիւնն եր ստանում. իսկ այժմ այն-  
պիսի լուութիւնն ընկավ, վոր կարծես թե բջիջի նիս-  
տին ներս սողոսկած լինեք մի ապիտակ գլարդիական.  
մտածում եյին և ուժեր հավաքում, վոր միանգամից  
հարձակվեն վրան:

Լուռ մնացին նաև այն ժամանակ, յերբ ընդհա-



նուր լուսթյունն ընդհատեց Գոմբորան և դիմելով ժողովականներին ասաց,—*ձեքեր հարցեր ունեն, հարցեր տվեք,—սովորականի նման մինչև անդամ այս պահին ել վոչ-վոք զեթ շարլոն նախադասութլունը չըկրկնեց.—*ճանաչում ենք, ի՞նչ պիտի հարցնենք:

Լուս վայրկյանները, վորպես չոր փայտի սլաքներ, խրվում ելին մարմնիս մեջ, հավաքվում վոտներիս մոտ և սպասում բոցավառվելուն. դդում ելի և գիտակցում, վոր պիտի ալրվեյի և բոցավառվեյի ամոթի և դառնության բոցավառ կրակներով:

Վերջին ուժերս հավաքեցի: Ժպտացի, վորպեսզի զգալ տամ, վոր վոչ մի առնչութլուն չունի տիրող լըսությունն ինձ հետ և գոռացի,—*ի՞նչ եք լուել:*

Ուղում եյի խոսքս շարունակել, սակայն Գոմբորան ընդհատեց.

— Ո՛ւ վ՛ ձայն տվեց քեզ, վոր ալդպես գոռում ես: Յեկ սովորականի նման ընթանում եր ժողովը: Ի՞նչ կար դարմանալու:

Դուք կարծում եք մեկ կամ յերկու անգամն է, վոր յերբեմնի ակտիվ կոմյերիտականը թողել-հեռացել և բջիջի աշխատանքներից ու ընկել քաղքենիական ճահճում,—խոսեց Գոմբորան և սկսեց փաստեր բերել իր միտքն ապացուցելու համար.—

— Մի կողմ թողնենք անցյալը. փաստեր բերենք մոտիկ անցյալից, դեռ յիրեկ եր, վոր նշանակվել եր անկուսակցական կանանց ժողով, ինքը չգնաց և ժողովը վիժեց: Պատմեմ ավելի մոտ ժամանակի դեպք:

Փաստերը փաստերի յետևից շարում եր Գոմբորան և սովորականի նման ընթանում եր ժողովը:

Մեր տղաները փաստեբին անգլիական ջորիներ  
 ելին անվանում: Վերին աստիճանի հաստատուն քայլ-  
 վածք և դիմացկուն կանգնվածք ունեյին այդ անգլի-  
 ական ջորիները: Մոտենում եյին ու փորձում նրանց  
 տեղից շարժել—ապարդյուն ջանքեր, վորովհետև մեխ-  
 ված ու հաստատուն կանգնած ելին նրանք:

— Ի՞նչ խնդիրներ եյին քննվում նոյեմբերյան  
 պլենումի նիստում,—հարցրեց կոմրջիջի ներկայացու-  
 ցիչը:

Պատասխանեցի:

Տեղից մեկը ծիծաղեց:

Ներկայացուցիչն ասաց.

— Մոցիալիստական շինարարական խնդիրներ  
 անշուշտ քննության են առնվում բոլոր պլենար նիս-  
 տերում: Յես ձեզ հարցնում եմ կոնկրետ կերպով նո-  
 յեմբերյան պլենումի մասին:

Կոնկրետ կերպով չգիտեյի, թե իրոք ինչ խն-  
 դիրներ եյին դրված նոյեմբերյան պլենումում. այն ել  
 չգիտեյի, թե իրոք գումարվել և նոյեմբերյան պլե-  
 նումը: Յեթե հարցնում են, նշանակում և պլենումը  
 գումարված պիտի լինի և դրա համար պատասխանն  
 ել յենթադրաբար ասացի. մեր պլենումում բացի սո-  
 ցիալիստական շինարարության վերաբերող խնդիրնե-  
 րից՝ ել ուրիշ ի՞նչ խնդիր կարող եր դրվել—ասացի:

— Այլ թեքման մասին գիտե՞ք լորեն բան—հարց  
 արեց լերկորորդը:

Ուրախացաւ: Հուսադրվեցի: Ուղղվեցի. կարծես  
 մինչ այդ գետի մեջ ընկղմվում-խեղդվում եյի և հան-  
 կարծ վտտներս դիպցրի գետնին: Ինչպես չե, գիտեմ:  
 Յերբեմի միջանի գեկուցումներ ել եմ ունեցել թե-  
 քումների վերաբերմամբ: Միշտ առած համարձակ նա-

յեցի նախագահի սեղանին: Սեղանի շուրջը խմբված աչքերը դուր չեկան ինձ: Յետ դարձա, պատից կախարած նկարին մոտեցա, հենվեցի և սկսեցի:

— Գնդ աջ թեքման մասին են հարցնում,— ընդհատեց նախագահը:

Նկարից աչքս հեռացրի: Հանկարծ աչքիս ընկավ Պելոլի կարմրած դեմքը: Շրթունքները ծիծաղելի կերպով շարժում, կարծես մի բան եր ուզում ինձ հասկացնել: Յետ գլխի ընկա: Պելոն կարծում եր, վոր չես այլ խնդրի մասին եմ խոսում և փսփսում եր— ուզում եր բան հասկացնել ինձ. մտածեցի ինքս ինձ և ժրպտացի: Նորից նայեցի նախագահի կողմը:

— Դու վոր ասում ես, դա ձախ թեքումն ե, խոսիր աջ թեքման մասին— ասաց նա:

Աջ թեքում... ձախ թեքում...

Դրված խնդրի հսկայական նշանակութունը ցրցվեց աչքիս առաջ: Համոզվեցի, վոր բոլորովին չեա եմ մնացել քաղաքական կյանքից: Գլխի ընկա, վոր չես շատ լավ գիտեյի այն բոլոր խնդիրները, վորոնք աշխարհական և աքառուսլ նշանակութուն ունեին յերկու տարի առաջ: Շատ լավ գիտելի և լուրացրել ելի այն բոլոր խնդիրները, վորոնք իմ ակախվ չեղածս ժամանակ քննության ելին առնվում մեր բջիջի նիստերում և վորոնցով դեկավարվում-առաջնորդվում եր ժամանակի քաղաքական կյանքը:

Իմ ծանոթություններն արդեն հնացել էյին: Նորանոր խնդիրներ էյին հրապարակ յեկել և հրատապ դարձել արդիականության համար: Այդ հարցերի նըկատմամբ պարմանալուց բացի, վոչինչ չեյի կարող արտահայտել:

Ողի մեջ արդեն սկսեցին ճոճվել անթիվ ձեռքեր անկեստաս մերժեցին. ունորոշ ժամանակով յետաձգեցին նրա յերկրորդ անգամվա քննությունը, չերբ, իհարկե, բջիջն անհրաժեշտ կզանհեր...

Գնում եմ ինչ-վոր խուլ—յետ ընկած փողոցով:

Գարուհը զոռում ե: Քարերի միջից բուսցրել և խոտեր և կանաչներով զուգել սալաքարերի ծայրերը: Նկատելի լեր, վոր հազվագլուտ են այս փողոցում քաղաքացիների ծանրաշարժ վտաններն այցի դալիս. մեռադների սառը շունչը դեռ չեր դիպել այն կանաչ-կոտ վայրերին, պատուհանների փեղկերը դեռ չիյին զընգացել բեռնակիր ավտոներ մոտենալիս:

Խաղաղ ու հանգիստ փողոց եր...

Ընտրությունն անհնար եր: Յես ցանկանում ե-լի լինել և մայր և հասարակական առաջավոր գործիչ: Մեկը մյուսին խանգարող: Յես արդեն նշմարում եմ իմ ապագա կյանքը: Վորդի կուսենամ, վորից հետո շարունակ պիտի աշխատեմ նրան սնուցանելու և դաստիարակելու գործի համար: Հիշեցի ամուսնուս, վորին նույնպես պիտի հսկես ու խնամես չերեխիդ նման. չեթե բաց թողնես ձեռքերը կմեկնի հոտած սովորութիւնների և առանց նախելու՝ անմիջապես դեպի բերանը կտանի: Հաճախ չերեխան խաղում և մնասաբեր նյութերի հետ: Վերցնում ե, որինակ՝ լավ սրած դանակ, ման ե տծում ամեն կողմ և ամեն անգամ չերեխան ձեռքին դանակը պտտեցնելիս՝ սարսուռ և բերում ծնողներին. — կմնասվի, մատը կամ մարմնի մի տեղը կկտրի: Փորձիր խլել նրա ձեռքից դանակը, բըղավոցը կդնի և արցունքներով կփողոզի հատակը: Յես տեսիլ եմ փորձված մայրեր, վորոնք նման դեպքերում չեն ծեծում իրենց չերեխային: Նա արթուն ե ու պատրաստ, և հենց վոր չերեխան մի վայրկյան աչքը հեռացնում և սրած դանակից, անմիջապես փոխարինում և այդ դանակը մի անմնաս և բուլթ դանակով:

Այս ձեռով պիտի կատարվի նաև Գիդոնի հին հայացքների փոխարինումը նոր հայացքներով: Յեթե խլես մեկը, դրա փոխարեն յերկրորդը պիտի տաս: Դրա համար անհրաժեշտ և ժամանակ, անհրաժեշտ և



զգաստություն, անհրաժեշտ և շարունակել, յերկա-  
րացնել սկսված ճանապարհը...

Անհնարին և, յեթե դրությունս չփոխեմ և հենց  
հիմքում չմեղցնեմ, չվռնչացնեմ իմ ապագա հասա-  
րակական աշխատանքները խանդարող պայմանները,  
ամեն տեսակի խոչընդոտները հակառակ դեպքում կու-  
սակցության կիսով չափ փակված դուռն ամբողջովին  
կփակվի վրաս: Կոմյերիտականի հասակա արդեն լրա-  
ցրել եմ և չեմ, ինչպես սենյակն ավելելու ժամանակ  
անկյունում ընկած աննշմարելի թանգարժեք իր, ան-  
պետք աղբի հետ դուրս կնետվեմ:

Փորիս նայեցի, ամբողջ մարմնովս հանկարծակի  
սարսուռ անցավ, կարծես վտառ դրած լինելի սողա-  
ցող ոձի մեղքին, կարծես դավալիս փոխարեն մանեմ  
տեղում ինձ հետ անողուտ մի մսի կտոր, վորը ժա-  
մանակին և հարմար վայրկենին պիտի կտրես դեն պցես,  
թե չե՛ կուչ կածի քեզ և կհիվանդացնի:

Արդյոք այս խնդրում ունեմ աղատություն.

Ընտրություն անելն անհնարին և. — բացակայու-  
չեցի բարձր ձայնով:

Իմ բացականչությունն ինձ ոտարոտի թվաց:

Խոչ անեմ, վորը վորին զոհաբերեմ, վորը վո-  
րի հետ փոխանակեմ:

Նայեցի շուրջս, կարծես սպասում ելի մեկին,  
վոր ինձ հաներ այս դժվար կացությունից և վորոշա-  
կի պատասխան տար իմ առաջադրած ծանր հարցին:

Բուն մտած շինքերի ու բնակարանների խաղա-  
ղությունն ու հանգիստը պահպանում են հազիվ ա-  
ղոտ լույսով վառվող ճրագները: Նկատեցի՝ վերից դե-  
պի ներքե եր իջնում Թոթիաուրին: Մի վատ հան-  
ցանքի մեջ բռնվածի նման ցնցվեցի և թագնվեցի մո-  
տակա պատշգամբի տակ:

Աչքերիս չերևաց դառն վրա փակցրած մի փոքրիկ  
սև տախտակ, վորի վրա խոշոր տառերով գրված եր.  
«Փորձված մանկաբուհուհի Պարսեմունովա»

Չար միտքը կատաղած շան նման հարձակվեց վրաս, առավ իր ձերաններն մեջ և ալկա բաց չեւ թողնում ինձ:

Փորձեցի ազատվել:

Ե՛լ ամիւի կատաղած գալրացաւ վրաս և շարտեց ինձ դեպի պատին կախված չարաբաստիկ տախտակը:

Լսում եյի արդեն Թոթիաուրու մոտեցող քայլերի ձայնը:

Տախտակի վրա գրած մակագրութլունը նորից կարդացի և...


\* \* \*

Կոմյերիտական և լերիտասարդ ընթերցող, ինչպէս տեսնում եք, պատմվածքն տպագրվել է դեռևս նյութը չամբարտած, կիսատ, ինչպէս վոր հանձնել եր ինձ բանֆակցին. յես ինքս կարող ելի վերջացնել, բայց համբերութլունս չբավեց: Անհարմար համարեցի քանի վոր հեղինակը՝ բանֆակցին իր գրվածքում պատմում եր իսկական լեղելութլունը: Վախենում եյի, չլինի թե պատմվածքին այնպիսի վերջավորութլուն տամ, վոր անբնական լիներ և չհամապատասխաներ հեղինակի առաջ բերած իսկութլանը, յեղելութլանը: Հո հնարավոր ե, վոր յես անհրաժեշտ գրտնեմ վորեւ հերոսի ֆիզիքական, քաղաքական կամ ալ տեսակի մահ: Գուցե և սխալվեմ: Չեմ ցանկանում անմեղ մարդու մեղքն ինձ վրա վերցնել, ուստի հրամայում եմ ձեզ, թանգագին ընկերներ, պատասխան տրվեք. — ձեր կարծիքով ինչպե՞ս պիտի վերջացաւ այս պատմվածքը:

Յես սիրով կընդունեմ ձեր տեսակետները, քըննութլան կառնեմ և հիմք ունենալով այդ բոլորը՝ կը վերջացնեմ՝ կավարտեմ իմ այս պատմվածքը:

Ընկերական բարեներով՝

Կոմսոմոսեմ Լորկիպաճիճե:



գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0045052

ფიზიკ 15 4.

(274.)

844

A  $\frac{i}{8236}$



Лордкипанидзе

Первая мать